



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

807

82
L-76

Rabbit

12/892

2011

2003

Հրատարակութիւն պ. Բ. Արուշանեանցի:

82

4-76

ԵՒԱՆՔԵԼԻՆԱ

(ԼՕՆԳՖԵԼԼՕ)

Լ

ԿՕԼՄԱՐԻ ԴԱՏԱԴՈՐԻ ՏԵՍԻԼԸ

(ԱԼՖ ՈՆԱԴՕԴԵԻՑ)

Փոխադրեց

ՅԱՐ. ՂԱՐԱՔԵՕԶԵԱՆ

ԹԻՖԼԻՉ

Տպարան Մովսէս Վարդանեանի

1892



Հոգի արարող Իշխման հարանձն
Եւ Յ. Զոհման Բաշկի 19 1 05 թ
Միւսկիւնիս

Հրատարակութիւն Պ. Բ. Արուշանեանցի:

82-3 ւր
Լ-76
ԵՐԱՆԳԵԼԻՆԱ
(ԼՕՆԴՅԵԼԼՕ)

Լ

ԿՕԼՄԵՐԻ ԴԱՏԱԻՈՐԻ ՏԵՍԻԼԸ

(ՍԼՅՈՆՍ ԴՕԴԵԻՅ)

Փոխադրեց

ՅԱՐ. ՂԱՐԱԳԵՕՋԵԱՆ

ԹԻՖԼԻՉ

Տպարան Մովսէս Վարդապետի

1892

Дозволено Цензурою. Тифлисъ 21 Декабря 1891 г.
Типографія М. Вартанянца, Гановская ул. д. № 3



3306
47
9-

Ո՛վ ունի հաւատ դէպի Ճշմարիտ
կնոջ մաքուր և անկեղծ սիրտը, նրա
մարդու վրայ ունեցած սէրը, որ ներ-
շնչում է եռանդ, քաջութիւն և կորովա-
մասութիւն դէպի հայրենիքը, թող կար-
գայ Լօնգֆէլլոյի այս փոքրիկ «Եւանդե-
լիստ» վերնագրով վէպիկը: Սրա շար-
ժառիթը եղել է Հիւսիսային-Ամերի-
կայի Նոր-Շոտլանդայում Մեծ-Պրէ-
կոչուած գիւղի աւերումը Անգլիացոց
ձեռքով: Մօտ երկու հազար ընտանիք
զրկուած իրանց հայրենի երկրից՝ մատ-
նւում են աւերիչ թափառական կեանքի:
Անգլիական կառավարութեան կողմից
այս գիւղի բնակիչների վերաբերմամբ
կատարուել է աշխարհիս երեսին ա՛յն

քստմնելի ու դաժան բռնակալ գործերից մէկը, որոնք տեղի էին ունենում յաճախ Քրիստոսի աշխարհագալուց առաջ:

Ամենքը համոզուած են, որ յաւիտենական ոչինչ բան չկայ. ամէն ինչ փոփոխական է: Քաղաքական կեանքի երևոյթները յաջորդել և յաջորդում են մէկը միւսի յետեւից անխափան ու անսայթաք կերպով: Ֆրանսիական Մեծ-Յեղափոխութիւնը փրկարար ազդեցութիւն ունեցաւ ո՛չ միայն Ֆրանսիացոց, այլ և բոլոր ազգերի, հետեապէս և մարդկութեան համար: Այդ կենդանացնող ու դարագլուխ կազմող ազդեցութիւնն արտափայլել է և իւրաքանչիւր ժողովրդի գրականութեան մէջ: Երևացել են հասարակութեան թանկագին շահերն ու նրա սրբութիւնները պաշտպանող անհատներ: Նրա լեզուն, գրականութիւնը, աշխարհագրութիւնն ու ժո-

ղովրդական պատմութիւնը նոքա պահել են բարձր դրօշակի վրայ: Ահա այդպիսի նշանաւոր անհատներից մէկն է եղել Ամերիկայի երևելի գիտնական բանաստեղծ Հենրիկոս Վանսֆորտ Լօնգֆէլլօն: Նա ծնունդ է 1817 թ. Պօրտլենդ քաղաքում, որ գտնւում է Հիւսիսային-Ամերիկայի Մէն շտատում: Սակեանքի չար բաղդի ալեկոծութիւնների վերաբերմամբ շատ խազաղ է անցուցել իր օրերը: Բնաւորութեամբ անշահ և անկեղծ դէպի իւրաքանչիւրի անճնաւորութիւնը. մարդասէր, հետեապէս և հայրենասէր: Երկու անգամ ճանապարհորդել է Եւրոպա և մանրամասն ուսումնասիրել գերմանական ազգի կեանքը և գրականութիւնը: Լօնգֆէլլօն մանկութիւնից վառ երևակայութեան տէր լինելով՝ գրել է շատ բանաստեղծութիւններ. գրել է գերիների մասին ոգելից երգեր, որտեղ նա արդա-

րացի անէծք է կարգում մի ազատ կո-
չուող երկրի գլխին, որ առանց պատ-
կառելու նեղրիտոսներին գերութեան
և սարկութեան մէջ է պահում: Բայց
նրա ամենանշանաւոր և եւրոպական
զրականութեան մէջ մեծ հռչակ ունե-
ցող ինքնուրոյն գործն է «Եւանգելիսն»
պոյեման: Տասն և իններորդ դարի
վերջին բառորդի նշանաբաններից մէկն
էլ այն է ընդհանուր եւրոպական զը-
րականութեան մէջ, որ բաջալերող սի-
րոյ հետ միասին երկու իրար սիրող
անհատներ՝ նուիրում են իրանց հասա-
րակական կեանքի գործունէութեան և
նախանձախնդիր են նրա շահերի ու
զարգացման: Շատ անգամ նաև զոհում
են իրանց նուիրական բարձր սէրը՝ կա-
նոնաւոր և անարատ հաւասարակշռող
ճշմարիտ բաղաբացիական կեանք ստեղ-
ծելու, ինչպէս զոհել են իրանց ան-
ձը կեղծ և չոր ու ցամաք ձևակա-

նութիւնը վերացնելու պատմական դա-
րերում Կոնֆուցիոսը, Բուդդան և
Քրիստոսը:

Այս վէպիկն այդպիսի նմուշներից
մէկն է ինչպէս Գէօթէի «Հերմանան
ու Դօրօթէան»: «Եւանգելիսն» կայ
բոլոր եւրոպական լեզուներով: Վերջին
ժամանակներս փոխադրուած է անգլիե-
րէնից և ռուսաց լեզուով: Սակայն, մենք
կարենոր համարեցինք ունենալ նաև Հա-
յոց լեզուով մեր նորաբողբոջ ազգային
զրականութեան մէջ: Այս վէպիկի հետ
միասին հայ ընթերցողը կը տեսնի նաև
մի պատկեր «Կօլմարի Դատաւորի Տե-
սիլը» վերնագրով Փրանսիացի ականա-
ւոր բանաստեղծ և ո՛չ պակաս հռչա-
կաւոր Ալֆօնս-Դօդէի երկասիրութիւնը:
Սրա այդ գրուածքի մէջ մերկանում է հայ-
րենիքի մի դաւաճանի և նրա աւերումը
պատճառող անհատի տիպը: Այս վէ-
պիկների հրատարակիչ պ. Բ. Արուշանեանը

ուրախութեամբ յանձն առնելով սրանց
նման զբքոյկների հրատարակութիւնը մեր
ժողովրդական ընթերցանութեան հա-
մար, կարեւոր և օրինակելի ծառայութիւն
է մատուցանում թէ հասարակութեանը
և թէ հայ զրականութեան:

ՅԱՐ. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆ

ԵՐԱՆԳԵԼԻՆԱ

(Վ. Կալիկ Լօնգֆելլօյի)

Այս փոքրիկ պատմութիւնը հիմնուած է մի քանի պատ-
մական փաստերի վրայ, 1713 թուականին Ակադիա կոչուած
երկիրը Հիւսիսային-Ամերիկայում, որ այժմ Նոր-Շոտլանդիա է
ասում, Ֆրանսիացոց էր պատկանում: Բայց յիշեալ թուա-
կանին հակառակ այդ գաղթական երկրի բնակիչների ցան-
կութեան ու համակրանքի, Փրանսիական իշխանութիւնը այդ
երկիրը տուեց Անգլիային, որի տիրապետութիւնը նրանք մի-
այն ակամայից ընդունեցին: Մի քանի ժամանակից յետոյ, երբ
Անգլիան Փրանսիայի հետ կռիւ ունեցաւ Վանադայի համար,
Ակադիայի բնակիչները կասկածի տակ ընկան Անգլիական
կառավարութեան կողմից: Կասկածի պատճառն այն էր, որ
իրր թէ՛ նրանք գաղտնի օգնութիւն էին տուել Փրանսիացոց
թէ՛ պաշարով և թէ՛ զէնքով: Չը նայելով որ այդպիսի
կասկածանքը ոչ մի կերպով չը հաստատուեց, բայց դար-
ձեալ բրիտանական կառավարութիւնը Ակադիայի ժողովրդի
հետ շատ դժմանք ու խիստ վարուեց. գաղթեցրեց նրանց
իրանց հայրենի երկրից, այն է՝ գիւղերից և բաղաճներից.
ցրուեց նրանց ուրիշ գաղթական ժողովուրդների մէջ, իսկ
նոցա հողերը, կայքը, կենդանիներն ու եղած-չեղածը
յարբուռիս զբաւեց:

Թուէլ ու մռայլ կանգնած է նախապատմա-
կան մի անտառ: Նրա մէջ գտնուած աղմուկ հանող
եղևներն երբ և Վանադայի ճանչող հացիները բարձրա-

նում էին խորհրդաւոր կիսամթի մէջ, Նրանք բոլորը կանգնած են, ինչպէս Հին դրուիդները *) մուսլ Բրետանում: Տխուր էին նրանց մարգարէական մրմունջները՝ թռչունների աղետալի դալլալ-լիկների հետ միասին: Ովկիանոսի ալիքներն իրանց ժայռոտ ափերից բեկբեկուած, լուսահատ կոծով՝ կրկնում էին բարձրաձայն այդ տխրադէմ անտառի հաւքերի տխուր երգերը, ողբալով և միևնույն ժամանակ՝ երբեմն անհոգ ու բաղդաւոր Ակադիայի ժողովրդի կորստի մատնուիլը, որ այժմ ցրուած է աշխարհիս վրայ, ինչպէս ծառի տերևները հոկտեմբեր ամսի դաժան քամուց երկար թափառելուց յետոյ ովկիանոսի երեսին՝ անհետա-

(*) Դրուիդները—հին Գալլիայում ու Բրետանում կելտական ցեղի քուրմեր, վարժապետներ, գուշակողներ, բժիշկներ, և դատաւորներ էին: Նրանք կազմում էին մի սահմանափակ միաբանութիւն կամ կարգ: Այդ միաբանութիւնը բոլորովին ազատ էր պատերազամական և ուրիշ շատ տեսակ ծառայութիւններից: Նա մեծ ազդեցութիւն ունէր ժողովրդի մէջ իբրեւ հոգեւորական դաս: Բաժանվում էին երեք դասակարգերի. գրիգիդներ, բարդեր ու գուշակողներ:

Նրանք բոլորը իրանց միջից ընտրում էին գլխաւոր քուրմ կամ հոգևոր գլուխ: Ապրում էին մուսլ անտառների մէջ: Մինչև հռոմէական կայսերութեան հաստատուիլը քիչ մարդկանց գոհեր չէին բերե, ու տանջել իրանց բագիններում: Վար նաև կանանց հոգևոր միաբանութիւն, ինչպէս մեր կոյսերի միաբանութիւնը, որ ունէր իր առանձին ներկայացուցիչը:

Ման. Յ. Ղ.

նում են նորա մի խոր անկիւնում... Այդ երկրի բնակիչների Մեծ-Պրէ անուանի գեղեցիկ գիւղն անհետացած է արդէն առանց մի ո՛ր և է հետքի, թողնելով միայն բարի լիշատակ:

Ա.

Ակադիայում՝ Մինի կոչուած ծովածոցի մօտ՝ նորա պտղաւէտ հովտում, կար մի փոքրիկ գիւղ Մեծ-Պրէ անունով: Այդ գիւղի շուրջը գտնուող ընդարձակ մարգագետիններն ընտիր արօտատեղիներ էին նրանց ընտանի կենդանիների բազմաթիւ երամների համար: Գեղեցիկ և ամուր պատնէշը, որ պահպանում էր գիւղը ծովի կողմից, հիանալի ոսկեփայլ արտերը, բանջարանոցներն ու այգիները, վերջապէս նրանց մաքուր ու գողտրիկ տները, որոնք թաղուած էին կանաչ խոտերի ու ծաղկած վարդերի մէջ, դոքա բոլորը պատմում էին երբեմն իրենց բնակիչների աշխատասիրութեան և երջանիկ օրերի մասին:

Ամառային հանգարտ երեկոներում՝ մայր մըտնող արեգակի ճառագայթները լուսաւորում էին գիւղի փողոցը՝ պսպղալով վառվռուն կերպով լուսամուտների ապակիների վրայ: Նրանք ոսկէգօծում էին կարծէք իրանց գոյնդգոյն փունջերով խրճիթների տանիքները և վառարանների բարձր խողովակները: Մատաղահաս աղջիկներն ու կանայք

սպիտակ թաշկինակները գլխներին, գոյն-զգոյն շորերով ժողովում էին փողոցում և ուրախ խօսում իրար հետ, մանելով մի և նոյն ժամանակ ոսկենման վուշը։ Նրանց կշկշան ձայները խառնուում էին թեշկների բզզոցի հետ։ Փողոցի մի կողմից քահանան անցնում էր դանդաղ նրանց առաջից։ Նրեխաները մօտենում էին նրան՝ օրհնութիւն ստանալու։ Օրիորդները և կանաչք իրանց նստած տեղից ոտքի էին կանգնում և հանգիպում նրան վայելուչ պատուով ու պատկառանքով։ Վերջապէս տղամարդիկ նաև տուն էին դառնում դաշտից։

Արեգակը քիչ-քիչ մալր էր մտնում պարզ հօրիզօնի յետևը։ Երեկոյեան արշալոյսն աստիճանաբար մարեց, տեղի տալով մթնշողին։ Նկեղեցու բարձրութիւնից ղողանջում էր երեկոյեան զանգակը։ Ծխնելոյզներից ոլոր-մոլոր դուրս էր գալիս մոխրագոյն ծուխը և խունկի պէս բարձրանում գէպի երկինք։ Գիւղի մի կողմում, Մինի ծոցին քիչ մօտ, ապրում էր իր կայքում ամենահարուստ կալուածատէրերից մէկը, Բենեդիկդ-Բելֆօնդէ անունով մի այլի մարդ իւր դեռահաս աղջկայ հետ։ Օրիորդի անունը Նւանդելինա էր։ Բոլոր տնտեսական կառավարութիւնը նրա ձեռքին էր։ Նա մի հանդարտ, հեզ ու համեստ աղջիկ էր։ Բոլոր գիւղի զարդն ու հարստութիւնն էր։ Եօթանասուն տարեկան ծերը դեռ ևս ամուր և զօրեղ էր զգում

իրան ինչպէս կաղնի, ծածկուած ձիւնի սպիտակ քուլաներով։ Նրա մագերը ճերմակ էին՝ ինչպէս ձիւն, իսկ այտերը մուգ, ինչպէս կաղնեայ տերևները ձմեռ ժամանակ։ Գեղեցիկ էր նրա Նւանդելինա աղջիկը իր սև ու խոշոր աչքերով, որոնք հեզիկ կերպով նայում էին նրա սև յօնքերի տակից։ Նա աւելի գեղեցիկ էր երևում՝ երբ հագնում էր իւր նոր շորերը և գնում եկեղեցի առաւօտները։ Ականջի օղերի փայլը մի ներդաշնակութիւն էր կազմում նրա նազելի գեղեցկութեան ու քայլքի հետ։ Երիտասարդները տեսնելով նրա հրաշալի երեսը շտապում էին նրան պարի հրաւիրելու՝ երբ իրանց գիւղի սուրբի տօնն էր լինում։ Բոլոր երիտասարդներից միայն դուր էր գալիս նրան Գաբրիէլ Լանթենէս անունով աղքատ պատահարի որդին, որ գիւղի մէջ կորովիներից մէկն էր համարվում։ Պայտահարի անունը Բագել էր։ Վերջինս Նւանդելինայի հօր Բենեդիկդի հետ հին բարեկամ էր։ Նրանց զաւակները միասին էին մեծացել, ինչպէս քոյր և եղբայր։ Թէ գիւղի քահանան և թէ վարժապետը նրանց երկուսին մի ուսումնարանական սեղանի վրայ էին կրթել ու զրել կարգալուսուցեց միևնոյն ձեռնարկով ու աղօթագրով։ Դասը վերջացնելուց յետոյ նրանք յաճախ խաղում էին իրար հետ և շատ բաների վրայ խօսում ու դատում։

Աշնանային ցուրտ երեկոները նրանք ժողո-

վում էին Գաբրիէլի հօր վառարանի շուրջը (որտեղ երկաթէ ձողեր էին դրած պայտ շինելու համար) տաքանում էին կրակի մօտ: Նրանք դիտում էին ուշի-ուշով թէ թնչպէս են պատրաստում պայտը և թէ թնչպէս էին ճշնշում հնոցի փուքները: Երբ վառարանի կրակն անցնում էր և մոխիր դառնում՝ նրանք ուրախ ուրախ սկսում էին խաղալ աչքակապուկ և ուրիշ խաղեր:

Զմեռը նրանք միասին սահնակներով էին զուարճանում: Ամառը մագլցում էին ծառերի ու պատերի վրայով ծիծեռնակների բոյներին հասնելու: Այսպէս անցան արագ կերպով երեսայութեան տարիները: Նրանք մեծացան, հասակաւոր էակներ դառան. Գաբրիէլը կորովի երիտասարդ, ընդունակ ամեն տեսակ աշխատանքի, իսկ Եւանգելինան հեզ, խոնարհ, համեստ, գեղեցիկ ու շարմաղ աղջիկ, որ ընդունակ էր պարգևել իր ընտանիքին սէր և բաղձաւորութիւն:

Աշունը եկաւ. գիշերներն սկսեցին երկարանալ և ցրտել: Տեղափոխուող թռչունները թողին սառուցով ծածկուած հիւսիսային տխուր ծոցերը. թռան գնացին արեադարձային կղզիների ավերը: Քաղը վերջացել էր արդէն, անտառների ծառերն անվեհերութեամբ կռվում էին սեպտեմբեր ամսի սպառնալի փոթորիկների հետ: Ամեն բանից երևում էր, որ խիստ և երկար ձմեռ պիտի լինի: Մեղունները հետևելով իրանց մարգարէական բնագղ-

մանը, սովորականից աւելի շատ մեղր պատրաստեցին: Հնդիկ որսորդներն սպասում էին դաժան ցրտերին, որովհետև աղուէսների մորթիները նրանց աւելի թաւ էին երևում: Այսպէս էր աշունը: Յետոյ հրաշալի եղանակ եկաւ, որ ջերմեռանդ ակադիացիների սովորութեամբ ասում է «բոլոր անմեղների և սրբերի ամառ»:

Օգը լի էր քաղցր դիւթական լուսով: Ընդհանուր տեսարանը պատկերանում էր պարզ, պայծառ տեսքով, որ տալիս էր նրան մի առանձին թարմութիւն ու մաքրութիւն: Կարծէք խաղաղութիւն և անկեղծութիւն էր թաքաւորում երկրիս վրայ: Ովկիանոսի ալեկոծեղ սիրտը հանդարտուել էր կարճ ժամանակով: Բոլոր ձայները խառնուելով իրար հետ, կազմում էին մի ընդհանուր ներդաշնակութիւն՝ երբեմն մեղմանալով ու ցածանալով: Արեգակը ժպտալով նայում էր ոսկեգօծ ծուխերի քուլաների միջով և փայլում էր ադամանդի նման ցօղի կաթիլների մէջ, որոնք ծածկում էին ծառերի ծիրանագոյն և ոսկեփայլ սաղարթը: Անցաւ շոգ, պայծառ օրը, տիրեց գիշերուայ խաւարը և երեկոյեան աստղերը վառվում էին արդէն երկնքի երեսին: Այդ ժամանակ դաշտից վերադառնում էր ոչխարների հօտը իր պահապան շան հետ միասին, որ արթուն կերպով հսկում էր հովուի քնած ժամանակ դաշտում կատաղի գայլերի սպառնալիքներից: Ուշ էր արդէն. լուս-

նիակով էին վերագառնում դաշտից սայլերը, բեռնաւորուած անուշահոտ խոտով: Կովերը կթեցին և յետոյ ամեն բան հանդարտուեց: Լռութիւն էր տիրում: Միմիայն խուլ էին լսվում գետակի խոխոջը և բարձրաձայն ծիծաղի կչկչոցները: Մեր կալուածատերը նստած էր ծխախոտը բերանին իր օջախի մօտ: Նրա հսկայական ստուերը երբեմն հրէշի նման շարժում և մեծանում էր պատի վրայ, ու երբեմն էլ անհետանում խաւարի մէջ: Բոցի ցոլացումը վազվզում էր բազկաթուռի կոպիտ նախշերի վրայով և անդրադառնում դարաքներում դրած ամաններից: Ալեւոր ծերը երգում էր ւայն երգը, որ երգում էին նրա նախնիքը իրանց նորմանդական այգիների և Բուրգունդիայի այգեստանների մէջ: Եւանգելիսան իր հօր հետ միասին նստած վուշ էր մտնում: Նրա թէշիկի բզզոցը ձայնակցում էր իր նախահարց երգերին: Յանկարծ ոտքի ձայն լսուեցաւ. դուռը բացուեց: Բենետիկտը կրնկի ձայնից ճանաչեց իր բարեկամ պայտահար Բազելին. այն է՝ Գաբրիէլը՝ հօրը: Այդ լուպէին Եւանգելիսայի սիրտը դալկացած վիճակի մէջ էր: Մի ինչ որ նախազգացումն նրան տրամադրեց, որ Բազելը մենակ չէ եկել, այլ մի մարդ էլ կար հետը:

Սիրալիր ընդունելութիւնից յետոյ՝ Բազելը նստաւ կրակի մօտ և սկսեց խօսիլ:

— Դու բաղդաւոր ես, ո՞վ Բենեգիկդ: Այժմ

բոլորի վրայ տիրում է մի ծանր նախազգացումն ու ընդհանուր ճնշում և հեծեծանք, իսկ դու առաջուայ պէս երգում ես քու պապերի հին երգերը և երբեմն էլ հանաքներ անում:

Այդ ժամանակ Բազելը առնելով Եւանգելիսայի ձեռքից չիպուխը՝ վառեց ծխախոտը ու կրկին շարունակեց:

— Ահա չորս օր է, որ մեր առաջ կանգնած են անդլիական պատերազմական նաւերը, որոնք մեզ վրայ են դարձուցել իրանց մահառիթ թնդանօթները: Յայտնի չէ թէ ինչ են մտածում մեր գէմ. բայց հրամայուած է, որ մենք վաղը ժողովուենք եկեղեցում, որպէս-զի լսենք թագաւորի վճիռը ու հրամանը: Սակայն շատ սրտեր այժմ տրորում ու բաբախում են երկիւղից:

— Բայց, կարելի է, անգլիացիք ոչ մի չարիք պատճառելու դիտաւորութիւն չունին. ասաց Բենեգիկտը, կարելի է նրանց հունձը այս տարի վառ լինելով սաստիկ հեղեղներից ու զանազան աննպաստ պատճառներից, նրանք եկել են մեզ մօտ ցորենի համար՝ մի կերպով իրանց քաղցը լազեցնելու:

— Մեզանում այդպէս չեն մտածում, ինչպէս դուք էք կարծում, — պատասխանեց տաք կերպով պայտահար Բազելը և միւսնոյն ժամանակ կասկածանքով շարժում էր գլուխը:

— Շատերը փախան և թազնուեցան անտա-

3306
47



ռում: Նրանք յուզուած սպասում են վաղուան: Մեր թշնամիները ի զուր չը խլեցին մեզանից բոլոր մեր գէնքերը ու հրացանները, որոնցով մի միայն հնարաւոր էր մեզ պաշտպանուիլ: Ուրախ կալուածատէրը պատասխանեց մի անհոգ ժպիտով:

— Ո՛չ մի բանից մի վախենա, իմ սիրելի բարեկամ, մի պղտորի վշտալի նախազգացումներով մեր ուրախութիւնը: Մենք այսօր կըստորագրենք մեր պայմանաթուղթը, իսկ վաղը հարսանիք կը լինի: Տունը արգէն պատրաստ է: Մի տարուայ համար էլ նախապատրաստութիւն տեսնուած է վաղուց:

Նոտարը եկաւ, որը մի ծեր մարդ էր, երկար դեղնաւուն մազերով, ակնոցները քթի ծայրին դրած: Մինչդեռ նա խօսում էր ծերերի հետ նոր շորերի մասին, Եւանգելինան լամպը վառեց և դրեց սեղանի վրայ: Նա միւսնոյն ժամանակ պատրաստեց մի մեծ լիքը տման՝ տանը պատրաստած զարեջուր: Այն ժամանակ նոտարը հանեց իրա թղթերը, գրիչը ու թանաքամանը, գրեց առանձին ուշադրութեամբ ամսաթիւը, հարսի ու փեսայի անունները: Բոլորը գրած էր մաքուր և գեղեցիկ: Մեծ կնիքը երևում էր փայլող տրեգակի նման թղթի մի լայն յուսանքի վրայ: Երբ Եւանգելինայի հայրը հանեց կաշեայ քսակը, փողը դրեց սեղանին՝ այն ժամանակ նոտարը կանգնեց իր տե-

ղից, օրհնեց հարսին ու փեսային, յետոյ վեր առաւ զարեջրով լի բաժակը, խմեց նրանց կենացը՝ մաղթելով երկար կեանք և առողջութիւն: Քիչ ժամանակից յետոյ հանդիսաւոր կերպով գլուխ տուեց նրանց՝ մնաս բարով ասելով ու դուրս գնաց՝ թողնելով հանդիսականներին խորին լռութեան մէջ: Այդ միջոցում Եւանգելինան շախմատի խաղի սեղանը մօտեցրեց բուխարու մօտ: Ծերերը ուրախ ուրախ տրամադրութեան տակ՝ սկսեցին պարտապէլ իրանց սիրելի խաղով: Իսկ երիտասարդները, այն է Եւանգելինան և Գաբրիէլը հանգարտ խօսակցում էին: Նոքա նստան լուսամուտի մօտ և դիտում էին լուսինը, որը նոր էր սփռել իր լոյսը ծովի դժգոյն մակերևոյթի վրայ և ոսկեղօծել դաշտերը: Տիեզերքի անհուն ու լուռ բարձր ովկիանոսում անթիւ ու անհամար աստղերը մէկը միւսի ետևից վառվում էին: Այդպէս անցաւ գիշերը:

Հէնց որ զանգակատանից իննը ժամը խիեց, մեր հիւրերը վեր կացան, մնաս բարով ասելով: Փեսայի վիրջին խօսքերը լի էին ջերմ սիրոյ խանդաղատանքով և նրանք իբրև մարգարիտներ ընկան Եւանգելինայի սրտի ու հոգու մէջ: Նորահարսը հրճուած, ուրախանում էր, երբ պատկերացնում էր իր լիշողութեան մէջ իրա սիրեկանի տարփալի խօսքերը:

Ծագեց պարզ առաւօտը... Մեղմ քամին

փչում էր Մինի ծոցից, որտեղ դեռ կանգնած էին անգլիական բոլոր նաւերը: Ամբողջ գիւղը ոտքի էր կանգնել: Նորա բոլոր շրջականներից Ակադիայի բնակիչները տօն օրուայ շորերով զարդարուած՝ երամ-երամ հաւաքուում էին այնտեղ: Օդը լցուած էր ուրախ ու զուարթ ծիծաղի ձայնով և բարեմաղթական խօսքերով: Աշխատանքի և պարապմունքի ձայները ընդհատուեցան: Փողոցում հաւաքուած էր բոլոր ժողովուրդը: Կանայք խումբ-խումբ նստած էին երկար նստարանների վրայ, խօսելով տաքանում էին արեգակի պարզ ճառագայթների տակ: Գիւղի բոլոր տները լի էին հիւրերով, բայց ամենից շատ ժողովուրդը հաւաքուած էր մեր ծէր Բենեդիկտի մօտ: Այդ ժամանակ Եւանգելիստն ուրախ սրտով բոլորին հիւրասիրում էր զարեջրով: Հարսանեաց ճաշը պատրաստ էր արդէն բաց օդում՝ պտղաւէտ ծառերի տակ, որոնց ցօղունները քաշ էին ընկել գետնի երեսով ոսկեզօծ պտուղների ծանրութիւնից: Պատի ստուերի տակ նստած էին քահանան, նօտարը, Բենեդիկտը և պայտահար Բագելը: Նրանցից քիչ հեռու նստած էր ծեր նուագաժող: Քամին խաղում էր նրա սպիտակ մագերի վրայ և սոււերի ու լուսոյ կաթիլները վազվզում էին նրանց վրայով: Ծերը ուրախ կերպով էր երգում իր տաւիղի դողդողջիւն ձայների հետ մի ներդաշնակութիւն կազմելով: Նա երգելիս բախումներ էլ

էր տալիս իր փայտեայ կօշիկներով: Ուրախ ու զուարթ՝ թէ մեծ և թէ փոքր պարում էին պտղատու ծառերի տակ՝ մարգագետնի վրայ: Ամենից ուրախ և հրաշալի երևում էին Եւանգելիստն, Բենեդիկտի աղջիկը և Գագրիէլը՝ պայտահարի տղան:

Այսպէս անցաւ առաւօտը: Բայց զանգակը զօղանջեց բարձրութիւնից ծանր ու տխուր կոչող ձայնով, որի ալիքները կոհակներով տարածուում էին մարգագետնի վրայ: Տղամարդիկների ահադին բազմութեամբ լիքն էր եկեղեցին: Կանայք հաւաքուած սպասում էին գերեզմանատան մօտ: Այդ վայրկեանին պատերազմական նաւերից դուրս եկաւ մի վաշտ զօրք և զոռոգութեամբ քայլերը փոխեց դէպի եկեղեցին: Ահաւելի կերպով սպալում և շողշողում էին սրերը ու հրացանները մութ և մռայլ տաճարի կամարների տակ: Եկեղեցու դռները փակուեցան: Ամբոխը լուռ ու մունջ սպասում էր թէ ինչ պիտի լինի դրա հետեանքը: Զինուորական վաշտի գլխաւորը ցոյց տուեց ժողովրդին թագաւորական թուղթը, որի վրայ դրօշմուած էին շատ կնիքներ, և բարձր ձայնով լայտարարեց:

— Դուք այսօր այստեղ հաւաքուած էք նորին մեծութեան անգլիական թագաւորի հրամանով: Նա դէպի ձեզ շատ զիջող, բարի և կարեկից իշխան էր, բայց դուք նրա ողորմածութեան փոխարէն թնչպէս հատուցիք: Թող ձեր սեփական

սրտերը ձեզ պատասխանեն դրա մասին: Ինչ համար թէև ծանր է կատարել այս յանձնարարութիւնը, սակայն ես պարտական եմ հնազանդիլ իմ միապետի կամքին ու հաճոյքին: Զեր հողերը տները, կենդանիները ու բոլոր եղած չեղածը պիտի գրաւուեն յարքունիս: Իսկ դուք բռնութեամբ պիտի գաղթէք այստեղից, ձեր մայրենի հողից, մի ուրիշ երկիր: Տայ Աստուած, որ դուք գոնէ այնտեղ, ձեր նոր հայրենիքում ձեզ պահէք, ինչպէս վայելէ հաւատարիմ հպատակներին և խաղաղ մարդկանց: Սակայն այսուհետեւ նորին՝ մեծութեան կամքով դուք իմ զերիները պիտի լինիք:

Այդ խօսքերը, ինչպէս կարկուտը, որ քանդում, աւերում է ցորենի դաշտն ու կենդանիները, այնպէս այն բառերը աւերեցին, աւազակացիների հայրենիքը: Մի քանի ըոպէ խոր լռութիւնից յետոյ՝ վհատիչ ու սպառնալի բացականչութիւնները հեղեղի պէս թափուեցան ներկայեղող զինուորականների գլխին և բոլորը միահամուռ կերպով կատաղի յարձակումով դիմեցին դէպի դռները: Բայց ի զճճ. ճշի, աղաղակի, հեծեծանքի, անէծքի ձայներով լցուեցաւ եկեղեցին: Ամենից առաջ բարձր գոչումով բարձրացաւ պայտահար Բագելը ամուր սեղմելով ու շարժելով օդի մէջ իր բռունցքները: Նրա երեսը կատաղութիւնից այլալուրեւ էր: Զայնը վայրենի ու խռպոտ էր դառել:

— Մահ անգլիական բռնակալներին, աղաղակում, գոռում էր նա:

— Ո՛չ, երբէք մենք չենք երդուիլ նրանց հաւատարիմ մնալու. մահ ինքնակոչ հիւրերին. մահ այն բռնակալ օտարներին, որոնք համարձակում են ձեռնամուխ լինելու մեր կեանքին, մեր սրբութիւններին, մեր խղճին ու կրօնին, մեր տներին և վար ու ցանքին:

Բայց այդ միջոցում անգլիական զինուորի անգութ ձեռքն ուժգին հարուածով ընդհատեց նրա խօսքերը, զրկելով նրան իր ոտքերից: Այդ ժամանակ աղմկալի կռուի ու վայրենի գոռում-գոչումների մէջ եկեղեցու քահանան՝ Ֆիլիպեան անուշով բարձրացաւ սեղանի աստիճանների վրայ: Զեռքը վեր բարձրացուց թէ չէ՝ մի անգամից տիրեց խորին լռութիւն: Նա տխուր, նուազ և աղի-ողորմ ձայնով ասաց.

— Ի՞նչեր էք անում, իմ զաւակներ, իմ սիրելի ժողովուրդ. ինչ անմտութիւն է ձեր կողմից, քառասուն տարի է, որ ես ձեզ ուսուցել եմ ո՛չ միայն խօսքով, այլ և գործով, որ դուք միմեանց սիրէք, սակայն ահա իմ աշխատանքի, ալօթքների, մաղթանքների ու տեսակ-տեսակ կրած զրկանքների պտուղները: Դուք սրբապղծում էք Աստուծոյ տաճարը բռնութեան ու ատելութեան գործերով, բայց ահա, Յիսուս Քրիստոս նայում է ձեզ վրայ իր խաչափայտից: Նայեցեք նրա վրայ թէ

Ինչպիսի անմեղութիւն և ճրքան տանջանք կայ նրա վշտալի Աստուածային դէմքի վրայ: Նրա շրթունքները մըմընջում են. « Հայր իմ, ներիր նրանց, նոքա չը գիտեն ինչ են գործում»: Ուստի, մենք ևս այս դառն ըրպէին, մեր պատուոյ զրկանքի և տխրութեան ժամին, կրկնենք մեր Յիսուսի խօսքերը, « մեր Հայր, ներիր նոցա:»

Երեկոյեան ժամերգութիւնը սկսուեց: Զերմ ու անկեղծ կերպով աղօթում էր Հայր Ֆիլիցեան: Ժողովուրդը Հետևում էր նրան վշտալից սրտով: Մի և նոյն ժամանակ մի սարսափելի լուր տարածուեց բոլոր գիւղի մէջ: Կանայք և օրիորդներ, փոքրիկ երեխաներ և մանուկներ հծծեծանքով, լացով, կոծով և հուռաչանքով թափառում էին դռնէ դուռ: Եւանգելիսնան երկար, տխուր կերպով կանգնած էր իր հօր տան առաջ և պահպանում էր աչքերը արեգակի խտտացնող ճառագայթներից, որոնք երեկոյեան արշալոյսի ժամանակ հանգիստւոր կերպով հեղեղի պէս ծածկել էին կարմիր ծիրանու նման լուսամուտների ապակիները: Երկար ժամանակ մնացել էր սեղանը, որի վրայ պատրաստած էր ընթրիք: Երկար սպասում էր Եւանգելիսնան իր հօրը, մինչդեռ բարձր ծառերի ստուերները չէին ծածկել մարգագետինները: Սակայն աւելի մեծ մռայլով ու խաւարով լցուած էր նրա սիրտը: Բայց երկնային պարգևները նրան չը զրկեցին իր կորովութիւնից. այն է՝ ողորմածութիւնը, երկար համբերութիւնը,

համեստութիւնը, ներողամտութիւնը, սէրը, և որ զլիաւորն է ազատութեան յոյսը:

Եւանգելիսնան իր գլուխը մոռացած, պտտում էր գիւղի մէջ: Նա խրախուսում էր թէ իր հրեշտակային հայեացքով, թէ իր կորովալի խօսքերով յուսատուութիւնից վհատուած կանանց, որոնք երեկոյեան պահին դանդաղ կերպով վերադառնում էին կրկին իրանց նեղ տնային հոգսերին: Յետոյ Եւանգելիսնան գիշերային մռայլ խաւարով պատած՝ կանգնեց եկեղեցու մօտ: Այնտեղից ոչ մի ձայն չէր հասնում նրա ականջներին: Ի գուր էր ականջ դնում լսելու դռներից ու լուսամուտներից: Բայց վերջապէս անհամբերութիւնն ու բորբոքուած ալեկոծութիւնը յաղթեցին նրան և նա անհանգստութեամբ սկսեց կանչել իր սիրելի Գաբրիէլին: Բայց մեռելների գերեզմանները մօտնջ էին, իսկ աւելի մօտնջ, մռայլ և տխուր էր այն գերեզմանը, որը յանկարծ կլանել էր այնքան կենդանի մարդիք: Գանդաղ քայլերով մատաղահաս օրիորդը, Եւանգելիսնան վերադարձաւ իր հայրենական փլատակուած ու ամայացած տունը: Արձագանքը տխուր կրկնում էր նրա ոտքերի ձայները: Գիշերուայ գերեզմանային լուութեան մէջ նրա ականջին հասնում էին անձրևի աղմուկը ու շվշվոցը, որը վայր էր թափում Եւանգելիսնայի լուսամուտի ներքև դրած ծաղիկների վրայ: Իրար ետևից կատաղութեամբ փայլատակում էր կայծակը: Ամպերի որոտումները ու փոթորիկը լիջեցնում էին նրան

Նախախնամութեան ոյժը, որը կառավարում է երկինքն ու երկիրը:

Չորս անգամ արեգակը ծագեց ու մայր մտաւ. վրայ հինգերորդ օրը առաւօտեան վաղ իրար ետեւից շարուած լուռ ու մունջ, տխուր կերպով գնում էին սայլերի շարքերը, որոնց վրայ բարցած տանում էին Ակադիայի կանայք իրանց տան կահ կարասիքը դէպի ծովի ափը: Նրանք կարօտալի դէմքով իւրաքանչիւր րոպէ երեսները լետ էին դարձնում և նայում իրանց հայրենի բնակարաններին ու քաղաքում օճախներին: Քիչ-քիչ հեռանալով գիւղից՝ վերջինս բոլորովին անհետացաւ նրանց աչքերից անտառի ետեւում: Նրանց հետ միասին թռչկոտելով գնում էին նորատի երեսները ու յաճախակի քշում էին եզներին, չխչխկացնելով իրանց խաղալիքները: Ծովի ափի մօտ՝ վայր էր թափած նրանց բոլոր կահ-կարասիքը: Ամբողջ օրը սայլերը նրանց ունեցած-չունեցածն էին բերում դէպի ծովի նաւահանգիստը. իսկ այգտեղից մակույկները կրօմ լցնում էին բեռնակիր նաւերի մէջ Կանադա տանելու համար: Արեւ մայր մտնելու միջոցին, գերեզմանատանից լսուեց թմբուկների ձայնը: Կանայք և երեսայք աւելի և աւելի կպան, իրարու միացան: Տխուր թափօրը դուրս եկաւ եկեղեցուց. առաջից գնում էին զինուորները. իսկ սրանց ետեւից Ակադիայի խոնարհ, բայց ստորուկ հարուստները: Ինչպէս ուխտագնացները սփոփում և փարատում են երգերով

իրանց յոգնածութիւնն ու կարօտալի վիշտը հայրենիքի վերաբերմամբ, այնպէս ևս մեր Ակադիայի գիւղացիք իրանց երգերով ու նուագարաններով, իրանց կանանցով ու երեսներով գնում էին դէպի ծովի ափը, որպէսզի այնտեղից նստին նաւեր ու հեռանան հայրենի երկրից:

Կիսաճանապարհին Եւանգելինան հանգիստ ու տխուր՝ գլխակոր սպասում էր թափօրի դուրս գալուն: Նա այդ ժամանակ զօրացնելով իր կամքի ոյժը՝ յաղթեց իր բուռն վշտին: Նա տեսաւ Գաբրիէլի ալեկոծուած, դեղնած ու ալլալուած երեսը: Սրտասուքի առատ կաթիլները գլորուեցան նրա աչքերից: Նա վրայ վազեց իր սիրականին հանդիպելու: Գրկեց նրան ու սկսեց թոթովել:

— Արիացիր, կորովի եղի՛ր, ո՛վ քաջ Գաբրիէլ, քանի որ մենք սիրում ենք իրարու, ո՛ւրեմն, չար բաղդի փոփոխականութիւնն ու ալեկոծութիւնները մեզ համար երբէք սարսափելի չեն:

Երբ նա ժպտալով այդ խօսքերը ասում էր, յանկարճ տեսաւ դանդաղ մօտեցող հօրը: Ինչպէս նա փոխուել էր: Նրա թշերիկարմրութիւնը անհետացել՝ աչքերը՝ կարծէք մարել էին: Նրա քայլերը ծանրացել էին վշտից, որը տիրում էր նրա սրտին ու հոգուն: Եւանգելինան այդ ժամանակ խորը հոգոց հանեց, բայց ժպտալով, զրկեց իր հօրը լի խանդադատանօք և մխիթարում էր սփոփիչ յուսադրող խօսքերով:

Ծովի եզերքում, նաւերի մեկնելու միջոցին, աղմուկ ու աղաղակներ բարձրացան: Շտապով վիտուռմ էին նաւահանգստում մակոյկները: Այդ ընդհանուր շփոթի բաբելոնի խառնակութեան ու աղմուկի միջոցին, կանայք կորուցին իրանց մարդկանց՝ հարսերը փեսաներին, կաթնասուն մայրերը մոռացան ծովի ափին իրանց սիրասուն զաւակներին: Գաբրիէլը և նրա հայր Բագելը սխալմամբ զանազան նաւերի մէջ ընկան: Իսկ Եւանգելինան այդ ժամանակ յուսահատ դէմքով կանգնած էր ծովի ափին իր հօր հետ միասին: Դեռ գործի կէսը չէր վերջացել, երբ արեգակը մայր մտաւ ու սկսեց մթնել: Մակընթացող ծովը արագութեամբ թողեց իր ափը, մերկացնելով եզերքի աւազի կոյտերը, որոնք ծածկուած էին տիղմով ու ջրաբոյսերով: Անտուն անտեղ ալաղիացիները տեղաւորուեցան գիշերելու իրանց սայլերի տակ: Դասաւորեցին իրանց տնային կարասիքները այնպէս, ինչպէս անում են բօշաները կամ ցիգանները դաշտում: Երբ գիշերը վրայ հասաւ, գիւղի կովերը դաշտից տուն վերադարձան: Նրանք տիւուր բառաչներով ի գուր էին պատում իրանց տէրերին կամ տանտիկիներին: Գիւղում ոչոք չ'ըկար: Գերեզմանային լռութիւն էր թագաւորում փողոցներում: Ձանգակատան բարձրութիւնից այլ ևս չէին զողանջի եկեղեցու զանգակները: Քուլա-քուլա բարձացող ծուխը վեր չէր բարձրանում այլ ևս կտուրների ծխնելոյզներից. Տների լուսամուտներում կրակ

ոչ լոյս չէր երևում: Ամէն բան աւերել էր և ամայի, տիւուր կերպարանք ստացել:

Բայց ծովի եզերքում բորբոքուեցին խարոյկները: Նրանք պատրաստած էին նաւերի և մակոյկների տախտակներից ու կտորտաքներից, որոնք դուրս էին ընկել ափը՝ փոթորիկների շնորհիւ: Նրանց շուրջը շարուած, նստած էին ուրուականի նման մռույլ ու տիւուր էակներ: Լսւում էին կանանց ու տղամարդկերանց ձայները: Լսւում էին երեսանների աղէտի, կոծի ու լացի աղաղակները: Քահանան ոգևորելով ու մխիթարելով անցնում էր մի խարոյկից դէպի միւսը: Վերջապէս նա հասաւ այնտեղ, որտեղ նստած էր Եւանգելինան իր հօր հետ միասին: Տէր-տէրը փլիկացող լուսով, տեսաւ ալեւոր ծիրունու դէմքը, որ բոլորովին դեղնել, նիհարացել, անկենդան ու վրայրենի բնաւորութիւն էր ստացել:

Եւանգելինան ի գուր էր փաղաքշանքով նրա հետ խօսում, իգուր էր նա նրան կերակուր առաջարկում: Նա անշարժ ու սառած մնացել էր առանց որ և է կենդանի նշուլի դէմքի վրայ, և յառած նայում էր բորբոքող բոցին:

— Բենեդիկտս. դիմեց նրան խղճալի ձայնով գիւղացի տէրտէրը և դրանից աւելի ոչինչ չը կարողացաւ ասել: Նրա սիրտը ճմլվում էր և բառերը սառչում էին իր շրթուքների վրայ, այդպիսի սարսափելի տանջանքի պատճառով: Լռութեամբ նա դրեց իր ձեռքը աղջկայ գլխին և աչքերը լի դառն ար-

տասուենքով դարձրեց դէպի երկինքը, որտեղ առաջ-
ուայ պէս հանգիստ ու խաղաղ կերպով փայլում
էին լուռ ու մուշկ աստղերը, որոնց անմատչելի
են մարդկանց տանջանքն ու վիշտը:

Հարաւում պարզ երկնքի երեսին լողում էր
աշնանային արիւնաթաթաւ լուսինը, որը աղօտ
լուսաւորերով ժայռերն ու ձորերը, գետերն ու առու-
ները, նրանց վրայ տիրած խաւարին աւելի մռայլ
կերպարանք էր տալիս: Քանի գնում նա աւելի
պայծառ կերպով էր լուսաւորում ծղնոտից շինած
տանիքները: Լուսաւորում էր նա և երկնակամարը
ու ծովի մակերևոյթը և նրա նաւահանգիստներում
կանգ առած նաւերը: Յանկարծ քուլայ-քուլայ
բարձրացան դէպի երկինք լուսաւորուած ծուխի սիւ-
ները: Պտոյտ գալով՝ մարում անցնում էին նրանց
մէջ լեզուի նման բարձրացող բոցերը: Բարձրացու-
քամին: Նա առաւել ևս բորբոքելով այրող ծղոտ-
ները՝ ցրուեց նրանց օդի մէջ:

Սև ծուխը կայծերով լուսաւորուած՝ դուրս
բռնկեց միանգամից հարիւրաւոր տանիքների տակից:

Անխօս, սառած ու ապշած ամբոխը այդ տե-
սարանով շուարուած մնացել էր, բայց յանկարծ բար-
ձրացան յուսահատ ձայներ, կոծ ու աղաղակ: Մի
խուլ տեղում աքաղաղը կանչեց՝ խաբուելով պայծառ
լուսից: Քամին տարածում էր կովերի բառաչիւնը,
և վախեցած ջների հաչոցը: Բայց ահա մի սարսա-
փելի ձայն է գալիս: Անտառները, դաշտերը ու մար-

գերը զարթեցան կարծէք մեռելութիւնից: Վայրի
կենդանիների ու գոմէշների հօտերը փոթորկի նման
վազում էին, մի որ և է երկիւղի կամ սարսափի ազ-
դեցութեան տակ: Վախեցած ձիերն ու կենդանիները
արձակուեցան իրանց կապերից: Նոքա ձորերում ու
դաշտերումն էին ցրուել: Գիւղի քահանան և աղ-
ջիկը շրջալուծած նայումէին այդ տեսարանի վրայ: Երբ
նրանք դիմեցին իրանց անխօս ընկերին, Բենեդի-
կտին՝ այն ժամանակ վերջինս անշարժ, մեռածի
նման, պառկած էր ծովի աւաղի վրայ:

Եւանգելինայի աչքերը, կարծէք, խաւարեց: Նրա
ծանրացած, անզօր գլուխը ընկաւ կրծքի վրայ: Եր-
կար ժամանակ նա պառկած մնաց անզգայ, կիսա-
քուն վիճակում: Երբ աչքերը բաց արաւ՝ նա ան-
բոխի մէջ էր: Բազմութիւնը բարեկամական սիրալիր
դէմքով կարեկցաբար նայում էր Եւանգելինայի վրայ,
որ լուսաւորուել էր ոտքից մինչև գլուխ հրդեհի
բարձրացող բոցերով: Քիչ հեռուից նա լսեց մի
ծանօթ ձայն:

— Նրան այստեղ, ծովի ափում կը թաղենք այժմ:
Բայց երբ մեղ համար կը դան ազատ ու փառաւոր լաւ
օրեր, երբ մենք մեր խղճի, համոզմունքի ու տան
տէր կը լինինք, այն ժամանակ մենք օտարութիւնից
կը վերադառնանք այստեղ ու նրա մարմինը կը
տանենք մեր գերեզմանատունը:

Շուտով հրդեհի լուսի տակ նրանք փորեցին
գերեզման ծովի ափին և առանց եկեղեցու զան-

գալի ու ծիսակատարութեան թաղեցին մեր կալուածատէր Բենեդիկտին: Միմիայն ծովի ալիքների ծփումը ձայնակցում էր նրանց աղօթքին ու մըրմունջներին:

Մակոյկները կրկին անց ու դարձ էին անուամբ և հեռանում էին ալիքի ծովի ներսը: Ծովի նոր մակընթացութեան ժամանակ նաւերը դուրս եկան նաւահանգստից, թողնելով եղբերքին թարմ գերեզմանը ու աւեր գիւղը:

Բ.

Միայն մի երկար տարի չէր, որ անցաւ այն ժամանակից, երբ բեռնակիր նաւերը դուրս եկան Մինի ծոցից՝ տանելով անբախտ ու թշուառ աքսորւածներին: Հեռու, զանազան տեղերում, ափ դուրս եկան նաւերից աղաղիացիները: Միայնակ, անտէր, անտուն, անյոյս ու վհատած նրանք թափառում էին քաղաքէ քաղաք, ցուրտ հիւսիսային լճերից հարաւային տօթ դաշտերը ու Ամերիկայի սաւանները, որոնք լիք էին անպատան ու բարեկամներ: Շատերը յուսահատ, սրտակոտոր գերեզմաններ էին որոնում: Յաճախ հանդիպում էր նրանց մէջ օրիորդ Եւանգելինան, որը խոնարհ ու հեզ կերպով հնազանդել էր իր նոր բաղդին ու վիճակին: Նա դեռ ևս մատաղահաս ու գեղեցիկ էր, բայց կեանքը նրան թուում էր տխուր ու ամայի անապատ, որտեղ ցրւած էին

իր մեռած բարեկամների շիրիմները, որոնք կեանքի վշտի ու տանջանքների շնորհիւ զրկուել էին յուսալու և ապրելու ընդունակութիւնից: Նրա կեանքի մէջ մի ինչ որ է թերի ու չը վերջացած օտարոտի բան կար: Կարծէք՝ թէ ամառային յունիս ամսուայ արեգակն իր բոլոր փայլով յանկարծ կանգ առաւ ճանապարհին և հետզհետէ մարելով՝ սկսեց իջնել դէպի իր ելքը:

Երբեմն Եւանգելինան կանգ էր առնում քաղաքներում, մինչև որ նրա ներքին աշխարհի աղմուկը ու անդադար բուռն ձգտումը մղում էին նրան դէպի յառաջ՝ նոր թափառական կեանքի ու նոր որոնողութեան: Գերեզմանատներում նա երբեմն կարգում էր խաչերի վրայ տապանադրերը: Երբեմն էլ նստում էր անյայտ շիրիմների մօտ՝ կարծելով որ, գուցէ նրանցից մէկի մէջ թաղուած կրկին այն էակի մարմինը, որին նա երկար որոնում էր . . .

Երբեմն էլ նա հանդիպում էր այն մարդկանց, որոնք Եւանգելինային տեսել էին մի ժամանակ այժմ իրանց մտքից դուրս եկած տեղերում:

— Գաբրիէլ Լանթենէս, ասում էին նրան երբեմն: Այո՛, լիրաւի, մենք նրան տեսանք Բազել պալատահարի հետ միասին: Այժմ նրանք Ամերիկայի դաշտերում ու սլեյթերում (տափաստաններում) յայտնի որսորդներ են:

— Գաբրիէլ Լանթենէսը, ասում էին աղջկան միւսները, մենք նրան ճանաչում ենք, նա Լուի

գիւնում ուղեցոյց էր:

Շատերը Եւանգելիստային խորհուրդ էին տալիս, որ նա բոլորովին մոռանայ Գաբրիէլին և մարգի գնացնոտարի որդուն, որը սիրում էր նրան արդէն շատ տարի առաջ: Բայց Եւանգելիստան Հաստատամտութեամբ ու խիստ կերպով մերժում էր ամենքին, նրանց խօսքերն անգամ չէր կամենում լսել: Նա ցանկանում էր բոլորովին Հաւատարիմ մնալ իր պանդուխտ նշանածին ու սիրելուն: Միմիայն Պելիցեա քահանան էր նրան Հասկանում ու նրա կողմն պահպանում: Տէր-տէրը ասում էր. սէրը մինչև անգամ անջատման ժամանակ էլ ունի իր ուրախ ու գաղափարական երջանիկ բոլորները, որոնք լուսաւորում, զուարթացնում են մարդու հոգին ու սիրտը:

Գեղեցիկ մայիսեան մի առաւօտ լայն Միսիսիպի գետի ոսկեզօծ ջրի ալիքների վրայով սահում էր մի մակոյկ, որ ղեկավարում էր Ակադիայի Հին բնակիչներից մէկը: Կանանց և տղամարդկանց ու երեխաների աքսորեալների մի խումբ, առաջնորդուած լոկ յուսով ու կողմնակի լուրերով, գնացել էր որոնելու Օպելուզի գեղեցիկ սիզաւէտ դաշտերում իր մօտ ազգականներին ու բարեկամներին: Նրանց Հետ էր նաև մեր Եւանգելիստան Հայր Պելիցիայի Հետ: Օր աւուր մութ ու վայրի անտառների միջով նրանք գետի Հոսանքով ցած իջան: Նրանք գիշերներն անց էին կացնում գետի ափում

վառուող խարոյկների մօտ: Նոքա Հասան այնտեղ, ուր միշտ թագաւորում է ամառը և որտեղից գետը Հսկայաբար փոխում էր իր Հոսանքը դէպի արևելք և գնում նարինջի ու կիտրոնի անտառների միջով: Հետևելով նրա Հոսանքին, խումբը Եւանգելիստայի Հետ միասին ընկան գետի մի ամբողջ լաբիւրինթոսում, որը Համարեա կանգնած ջրի կերպարանք էր կրում: Նրանց վրայ Հիւսուած էին մութ նոճիների ճիւղերը՝ ստուերախիտ կամարներով: Նոցա վրայ փաթաթուած սողացող մամուռները ծփում էին քամուց, խոր մեռելային լուսթիւնը ընդհատում էին միայն արագիւներն իրանց ժանգոտ ու ծւծւան ձայնով, որոնք արեգակը մայր մտնելու պէս աղմուկով վերագառնում էին իրանց բուները: Միւս կողմից բուներն իրանց խռպոտ ձայնով ու գիւական ծիծաղով Հանդիպում էին նոր դուրս եկած լուսնին: Վերջինիս մեղմ ճառագայթները թափանցելով լուսեղէն կամարից՝ արծաթի ու ոսկու գոյն էին տուել գետի մակերևոյթին: Նրանք լուսաւորել էին նոճիների ու մայրիների բարձրաբերձ սիւները: Շրջակայ առարկաները միգապատ ու հրէշաւոր էին երևում: Տխուր և ծանր զգացմունքը տիրել էր ամենքի Հոգուն: Մի ինչ որ է օտարոտի նախազգացումն բոթաբեր քուրհանդակի նման գուշակում էր սնտեսանելի ու անդառնալի թշուառութեան մասին: Բայց այդ վայրկեանին մի սովորականից դուրս յափշտակութիւն տիրեց Եւանգելի-

նային: Այդպիսի վիճակը նրան կարողութիւն ու գուարճութիւն էր ներշնչում: Նրան թուում էր թէ՛ իրանից առաջ Գաբրիէլը նաւակով անցել էր արդէն այդ կանաչադարձ մութ կամարների տակով: Նա կարծում էր թէ թիավարի ամեն մի հարուածը նրանց մօտեցնում էր իրարու:

Միայն հետեւեալ օրուայ կէս-օրին գուրս եկան նրանք ստուերապատ ջրի հոսանքներից: Նրանց առաջ տարածւում էին ընդարձակ կերպով Ատջաֆալուի գոյն զգոյն, երփներանգ լճերը, որոնք լուսաւորուած էին արեգակի ոսկեզօծ ճառագայթներով: Բիւրաւոր ջրային շուշանները տատանւում էին թիերի հարուածներից: Ներգիւն (ЛОТОСЬ) կոչուած բոյսի ոսկենման ծաղիկները ծածկում էին թիավարների գլուխները: Կէս օրուայ օդը լի էր ջրային ծաղկող առօրտի և վարդիօնի անուշահոտութիւնով: Մեր ճանապարհորդները գիշերուայ անքնութիւնից յոգնած թիավարելով հասան մի կանանչ անտառախիտ կղզու: Վեր եկան այնտեղ անոյշ ու հանգիստ կերպով մի խորը քնեցին սաղարթաւոր մայրիների տակ: Այդ վիճակում Եւանգելիսան թաղուեցաւ բաղաւոր ու վարդագոյն երազներում, որոնք աւետում էին նրան երջանիկ օրեր և ապագայ:

Միւսնոյն ժամանակ մակոյկը սողալով անթիւ ու անհամար կղզիների մէջ՝ որսորդների թիակներին զօրեղ ընդդիմադրութեան տակ հասաւ նրանց մօտ: Նա ուղևորում էր դէպի հիւսիս բիզօնների

ու կուղբերի երկիրը: Ղէկի մօտ նստած էր մի հոգատար ու մտատանջ դէմքով երիտասարդ: Զը նայելով նրա տարիների ու հասակի փոքրութեանը՝ նրա դէմքը շատ տխուր էր: Սրագութեամբ անցան նոքա հակառակ կողմից՝ կղզու մօտով և չը կարողացան տեսնել թիերի մէջ կապած մակոյկը: Թիակների աղմուկը չը զարթեցրեց մեր յոգնած ճանապարհորդներին:

Երեկոյեան արեգակը հրդէհի նման լուսաւորել էր երկինքը և ջրի երեսը: Այդ ժամանակ Ակագիացիների մակոյկը մտաւ Տէգա գէտը, որ հոսում էր Օպելուզի կանանչ մարգագետինների միջով: Անուշահոտութիւնով լի օդի մէջ անտառի վրայով ոլոր-մոլոր բարձրանում էր ծուխը, որից երևում էր, որ մօտակայքում բնակութիւն պիտի լինէր: Լսուեցան փողերի ձայներ ու կովերի բառաչիւն: Ստուերախիտ սաղարթաւոր կաղնիների տակ, որոնք փաթաթուած էին իսպանական մամուռի ծաղկեայ պսակներով, գտանւում էր մի տուն, շրջապատուած գեղեցիկ այգիով: Նա շինած էր նոճիների գերաններից, տանիքը լայն ու թէք էր: Սողացող վարդերը ու խաղողի թփերը պատել էին այն սիւները, որոնք ընդարձակ ճեմելիքի նեցուկներն էին: Հեռու, մարգագետնի մի անկիւնում, ձիաւորը, որի լայն ու մուգ դէմքը թագնուած էր իսպանական մեծ շապոյի տակ, կանգնեցրեց իր ձին և հանգստութեամբ յափշտակւում ու սիրահարւում էր խաղաղ ու ջինջ տե-

սարանով: Յետոյ սրինգը դրեց իր շրթունքների վրայ, որի ձայնից սկսեցին իրար մօտ հաւաքուել եղջերաւոր կովերը:

Այս մեր անյայտ ձիաւորը, երբ տեսաւ մատաղահաս աղջկանը ու քահանային՝ գնաց դիմաւորելու նրանց, բայց յանկարծ հիացած ու յափշտակուած վայր թռաւ ձիու թամբից ու զրկաբաց վազեց դէպի նրանց: Այս ձիաւորն ինքը պայտահար Բազելն էր, Գաբրիէլի հայրը: Առաջ ծիծաղելով, իսկ յետոյ լալով նրանք փաթաթուեցան իրարու և միանգամից չը գիտէին թէ ինչ ասեն, ուստի, վայրկենական լռութիւն էր տիրում նրանց մէջ:

Եւանգելիսնան Գաբրիէլին որ չը տեսաւ, իր մէջ կասկածանք ու անհանգստութիւն առաջացաւ:

— Մի՞թէ դուք անցնելով Ատշաֆալուն, չը հանդիպեցիք իմ Գաբրիէլի մականիկին, հարցրեց վերջապէս նրա հայր Բազելը:

Եւանգելիսնան իմանալով, որ Գաբրիէլը գնացել էր՝ սկսեց լացից դառն հեկեկալ: — Կորովի, քաջ ու զուարթ եղիւր, ո՞վ իմ զաւակ, ասաց նրան հպարտ ձայնով Բազելը, որը աշխատում էր աղջկանը մխիթարել իր խօսքերով:

— Գաբրիէլը այսօր միայն ճանապարհ ընկաւ: Իմ անխելք տղան թողեց ինձ մենակ իմ ոչխարների ու կենդանիների երամների մօտն ու գնաց:

Նրա հոգու ու սրտի մէջ ոչ ուրախութիւն և ոչ հանգստութիւն կար: Նա իրա այդպիսի վիճակով մեզ բոլորիս այստեղ տխրութիւն պատճառեց: Ուստի, ես վերջ ի վերջոյ մտածեցի ուղարկել նրան քաղաք, որպէս զի նա ծախէ մեր ջորիները Իսպանացոյ: Այնտեղից նա կուղևորուի հնդկների երկիրն աղուէսներ որսալու և կուղբեր բռնելու համար: Սակայն, մի յուսահատուի, նա հակառակ հօտանքի է գնում, ուրեմն, այնքան հեռու չէ կարող գնալ, այնպէս որ մենք շուտով կը հասնենք նրան, եթէ վաղը առաւօտեան արշալոյսին դուրս գանք:

Շուտով նուազածու Միքէլն էլ երևեցաւ, որը մի քանի տարի ապրել էր Բազելի յարկի տակ: Գաղթական ակադիացիները, որոնք եկել հասել էին այստեղ, զարմաքցով տեսան իրանց նախկին պայտահարի հարստութիւնը: Նրանք լսում էին Բազելի պատմածը հրաշալի կլիմայի, օդի ու երկրի հողի մասին, բազմաթիւ ոչխարների հօտերի մասին, որոնք արածում էին Ամերիկայի սիզաւէտ դաշտերում — ա՛ռ, որքան կուզես: Ակադիացիներից իւրաքանչիւրը այս դէպքում յոյս ունէր, որ ինքն էլ կարող է տեղաւորուել և հարստութեան տէր դառնալ:

Հետեւեալ օրը, երբ կարմիր արեգակը հէնց նոր էր դուրս եկել Եւանգելիսնան ու Բազելը մնաս բարով ասելով Ֆիլիցիա քահանային, շուտով ճանա-

պարհ ընկան: Ուրախ և զուարթ սկսեցին նրանք այդ առաւօտը իրանց ճանապարհը: Նրանք ընկել էին այն մարդու ետեւից հասնելու, որին օտարոտի բաղդը մղում էր յառաջ, ինչպէս մի տերև անապատի մէջ: Բայց ոչ այդ օրը, ոչ երկրորդ և ոչ երրորդ օրը նրա հետքը չը կարողացան գտնել: Շատ օրեր էին անցել արդէն. միմիայն անորոշ լուրերը նրանց տանում էին այս ու այն կողմը: Վերջի վերջոյ իսպանական Ադալնօնի քաղաքի փոքրիկ հիւրանոցում նրանք տեղեկացան, որ հէնց նախընթաց օրը Գաբրիէլը իր ընկերների և ուղեցոյցների հետ միասին, թողեց գիւղը և գնաց սիզաւէտ պրերները:

Հեռու, արեւմուտքում տարածւում էր մի ամալի լեռնոտ երկիր, բարձրաբերձ, ձիւնապատ գագաթներով, անդնդային նեղ ձորերով, որոնց միջից գաղթականները հազիւ կարողանում էին ճանապարհ գտնել դէպի Օրեգօնի հովիտը հասնելու: Արեւելքում, սարերից վայր էր վազում նազւոր Նեբրասկան. հարաւում աւազոտ ու ժայռոտ սարերից աղմկալի կերպով վազվզում էին դէպի ովկիանոսը անթիւ ու անհամար ջրերի հեղեղներ: Այդ հեղեղների միջանկեալ տեղերում, ընդարձակ փռւում են առատ ու հրաշալի սիզաւէտ պրերները, որոնց վրայ արածում են եղջերուների ու վայրի ձիերի ջոկերը և երամները: Սրբնթաց գետերի ափերին բուսած են մոլթ անտառներ, որոնց մէջ ինչպէս

ճգնաւորներ, ապրում են մռայլագէտ առջերը: Ահա այս երկիրն էր գնացել մեր Գաբրիէլը ուրիշ որսորդների հետ միասին:

Օր աւուր կարմրամորթ ուղեկիցների առաջնորդութեամբ գնում էին մի և նոյն ճանապարհով Բազելը ու եւանգելիստն: Նրանք ամեն ընդմիջ յոյս ունէին, որ կը հասնեն նրա յետեւից: Երբեմն թուում էր թէ՛ հեռւում ծուխ էր բարձրանում Գաբրիէլի իջևանից ու ոլոր-մոլոր տարածւում էր առաւօտեան օդի մէջ: Բայց երեկոյեան հասնելով այդ երևացող իջևանին՝ միմիայն գտնում էին ածուխի կտորներ ու մոխիր: Յաճախ սաստիկ տխրութեան մէջ էին ընկնում նրանք և չափազանց յոգնածութիւնից թուլանում էին, բայց և այնպէս յոյսը, հաւատը, ինչպէս խաբուսիկ Պատա-մօրգանա *) էլի մղում էր նրանց դէպի յառաջ ու յառաջ:

Միանգամ, երեկոյեան երբ նրանք նստած էին կրակի մօտ՝ նոցա վրանը մտաւ մի կարմրամորթ

*) Պատա-մօրգանա— իտալական բառ է, նշանակում է ծովածին: Դա մի տեսակ երեւոյթ է ջրի երեսին արեգակի դուրս գալու ժամանակ, երբ վերջինս մի կէտից տարածում է իր ճառագայթները 45 աստիճան անկան չափով ծովի կամ գետի մակերևոյթին. այն ժամանակ եթէ մարդ թիկունքը դարձնէ արեգակին՝ կը տեսնի ջրի երեսին սիւներ, կամարներ, պալատներ, բարձրաշտաբակներ, ծառեր, տներ և այլն: Այդ բոլոր պատկերները արագ կերպով անցնում են ջրի վրայով մէկը միւսի ետեւից:

կին: Նրա գէմքը կրում էր իր վրայ դառն վշտի
և համբերութեան կնիք: Նա Շուան կոչուած ցե-
ղից էր: Նա տուն էր վերադարձել դաժան ու խիստ
կոմանդների երկրից, որոնք սպանել էին իր մար-
դուն: Շարժուած այդ կնոջ սրտաշարժ պատմու-
թիւնից՝ ճանապարհորդները նստեցրին նրան իրանց
խարոյկի մօտ և հիւրասիրեցին ընթրիքով, որը
պատրաստած էր որսի խորոված մսից և ածուխի
վրայ եփած կանանչեղէնից: Առաւօտեան այդ կինը
նրանց հետ միասին ճանապարհ ընկաւ և պատմեց
նոցա ճանապարհին, որ լեռների արեւմտեան մի
փեշում, ապրում էր իր գիւղի մէջ քարոզիչ խմբի
կամ առաքելութեան գլխաւորը, նա ուսուցանում
էր ժողովրդին՝ պատմելով նրանց Ս. կոյս Մարիամի
և Յիսուս Քրիստոսի մասին: Ճանապարհորդները
հրճուանքով ընդունեցին այդ լուրը և ուղե-
որուեցան անմիջապէս դէպի քարոզիչ առա-
քեալներն՝ յուսալով նրանցից մի բան տեղեկանալ:
Արեգակը մայր մտնելիս նոքա հասան դետին: Նրա
առուի մարգագետնին տեսան ճիւղուիդական քարոզիչ
խմբի վրանները: Գիւղի մէջ տեղը սաղարթաւոր
կաղնու բնից կախած էր Քրիստոսի խաչելութեան
պատկերը: Այդ տեղը նրանց՝ իբրեւ մի մատուռ էր
և բոլորը հաւաքուել էին երեկոյեան աղօթքի: Ճա-
նապարհորդները լռութեամբ նրանց հետ խառ-
նուեցան:

Այդ առաքելական խմբի գլխաւորն ամենայն

ուրախութեամբ լսեց իր մայրենի լեզուի քաղցրա-
հնչիւն ձայները: Նա տարաւ ճանապարհորդներին
իր վրանը՝ նստեցրեց նա մորթիների վրայ, հիւ-
րասիրեց եգիպտացորենից պատրաստած գաթանե-
րով և ջուր տուեց իր սափորից: Վեց օր չէր ան-
ցել այն օրից՝ երբ Գաբրիէլը հանգստանալով նոյն
տեղը, որտեղ նստած էր այժմ Եւանգելիստան, պատ-
մեց նրանց նոյն տխուր անցքը: Բայց յետոյ նա
ճանապարհ ընկաւ հեռու դէպի հիւսիս, մտադիր
լինելով աշնանը որսորդութիւնից յետոյ վերա-
դառնալ քարոզչական խմբի մօտ: Երբ լսեցին այն
լուրը՝ թէ այս դէպքում էլ նրանք ուշացել էին,
Եւանգելիստան համարեա սարսափահար եղաւ և քիչ
մնաց ուշաթափ լինելու: Թէ այս թէ այն՝ նա կրօ-
նաւորից թոյլտուութիւն խնդրեց մնալու իրանց
խմբի մէջ՝ մինչև Գաբրիէլի վերադարձը: Եւանգելի-
սայի այդ առաջարկը աւելի խոհեմ էր: Բազելը
նրան մնաս բարով ասելով իր ընկերների հետ մի-
ասին միւս առաւօտ ճանապարհ ընկաւ գնալու
այնտեղ, որտեղից նոքա եկել էին: Իսկ Եւանգե-
լիստան մնաց յիշեալ առաքելական խմբի մէջ:

Շատ դանդաղ ու տաղտկալի էին անցնում
օրերը, շաբաթները և ամիսները: Նորկանաչած եգիպ-
տացորեանների դաշտերը շուտով դեղնել էին:
Հոռնձը վերջացաւ: Աշունը գնաց: Նրա ետևից յա-
ջորդեց ձմեռը: — Բայց Գաբրիէլը դեռ չէր վերա-
դարձել դէպի քարոզիչների խումբը: Վերջապէս

կրկին գարունը եկաւ, թռչունները իրանց քաղցը
գայլալիկներով լցրել էին անտառները, իսկ
Գաբրիէլը դարձեալ չը կար: Միայն ամառուայ
սկիզբներում լուր հասաւ թէ՛ նա տեղաւորուել է
իբր թէ հեռու հիւսիս-արեւմտքում, Միջիգած լճի
անտառների մէջ, որոնք տարածւում էին Սագի-
նայու գետի ափերում: Այն ժամանակ Եւանգելի-
նան ընկերացաւ տուն վերադարձող ուղեցոյցնե-
րին, որոնք գէպի հիւսիս էին գնում: Թողեց այդ
քարոզիչների խումբը: Բայց երբ երկար, ծանր ու
յաճախ վտանգաւոր ճանապարհից յետոյ՝ նա հասաւ
Միջիգանի անտառները՝ որսորդի բնակարանը
ամալի և փլտակուած վիճակի մէջ էր գտնուում:
Այսպէս անցան երկար ու ձիգ տխուր տարիները: Եւ-
անգելինային հանգիստում և տեսնում էին երբեմն
քարոզիչների խմբի մէջ, երբեմն պատերազմող քաջ
զինւորների հետ կռուի դաշտում, երբեմն խուլ որ և է
առանձնացած գիւղում, որտեղ ապրում են մարդիկ,
ինչպէս ճգաւորները, և երբեմն էլ բազմամարդ մեծ
քաղաքներում, ուր կեանքը եռ էր գալիս: Տեսիլի
պէս նա երեւում էր ու անհետանում առանց մի
որ և է հետքի: Եւանգելինան իր թափառական
կեանքից առաջ գեղեցիկ էր ու նորատի, բայց
տարուց-տարի, աստիճանաբար պակասում էր նրա
հրաշալի դէմքի գեղեցկութիւնը, թողնելով նրա
հրեշտակային երեսի վրայ միայն յշտի ու տըխ-
րութեան կնիքը: Նրա գլխի մազերը քիչ-քիչ սպի-

տակել էին սաստիկ մտատանջութիւնից, իր սիրուց
ու հայրենիքի կարօտից:

Դեւալարի ափերում, գեղեցիկ անտառային
հովտում կար մի աղմկալի քաղաք: Ահա այստեղ
Եւանգելինան վճռեց վերջնականապէս մնալ: Մի
ինչ որ հայրենական կարօտի զօրութիւն նրան
քաշում էր այնտեղ: Այդ ոյժը նրան յիշում էր իր
ծնուած հայրենի երկիրը՝ Ակադիան: Այս քաղաքի
բնակիչները կ'ըլէր *) էին: Տարիները անցնելուց

*) Ալիկերները-մի կրօնական հասարակութիւն է Ամի-
րիկայում: Նշանաւոր է նրանց կրօնական հաւատալիքը:
Կրօնական տեսակէտից այդ հասարակութիւնը կազմակեր-
պեց 1616 թ. Դոնորդ Փոքսոնը Անգլիայում: Նրանք ի-
րանց բանուանում են բարեկամների Քրիստոնեայ հասա-
րակութիւն: Անգլիայում դրանք սաստիկ հալածանքի են-
թարկուեցան կառավարութեան կողմից, բայց 1689 թ.
Վիլհելմ III-որդի օրով կրօնական պաշտամունքն կատարե-
լու համար՝ ազատութիւն ստացաւ:

Վիլհելմ Պեննի ժամանակով ամերիկական կլակեր-
ների համար երկրորդ հայրենիք դառաւ: Նրանց կրօնա-
կան վարդապետութիւնը Բօքերտ Բարկլիի շարադրութեան
մէջ է. «Նախաշաւիղ և հաւատոյ հանգանաք» վերնագրով: Ըն-
դունում է բողոքական եկեղեցու գլխաւոր հաւատալիքները՝
բայց աւելի լուսոյ ու մարդկային գիտակցութեանն էն
հետեւում, քան Աստուածայնի ցամաք խօսքերին: Նրանք
հոգեւորականներ չունին: Եկեղեցական արարողութիւնը չատ
և չատ հասարակ ու պարզ է. ոչ զանազան պատկերներ ու-
նին և ոչ էլ երգում են եկեղեցում: Մարթանքի կամ
աղօթքի ժողովներում խօսում է նա, ով իրան զգում է
սուրբ հոգով լցուած (наитіе духа), իսկ եթէ ոչ՝ նրանք

յետոյ, կարծէք, Եւանգելիան հաշտուել էր իր բաղտի հետ: Նա Դաբրիէլին չէր մոռացել, բայց վերջինս, կարծէք թէ մեռել էր նրա կանացի յիշողութեան մէջ՝ նոյն ծաղկաթիթ երիտասարդի նման, ինչպէս որ տեսել էր և գիտէր Դաբրիէլին մանկութեան հասակից սկսած: Կեանքը, որ լի է աւերիչ վշտով և տեսակ տեսակ բազմաթիւ զրկանքներով, ուսուցել էր Եւանգելիային լինել համբերող և ինքնազոհ: Այսպիսի վեհանձն վիճակում նրա սէրը աւելի ոյժ և լայն կերպարանք էր ստացել: Մի քանի տարի նա ողորմած քրոջ պաշտօն էր կատարում և այցելում էր խեղճերին ու աղքատներին, որոնք ապրում էին քաղաքի խուլ ու յետ ընկած հեռու անկիւններում, որտեղ բուն էր դրել ու թաղաւորում էր աղքատութիւնը իր սոսկալի հետեւանքներով, այն է՝ զանազան տեսակ ցաւեր ու վշտեր: Համարեա ամեն գիշեր նա անցնում էր հիւանդների ու տառապեալների մօտ և միայն առաւօտները վերադառնում էր տուն փոքր ինչ հանգստանալու,

ցրվում են իրանց տներում լուռ ու մունջ կերպով: Խիստ բարոյական են, մերժում են հաղորդութիւնը. չեն ընդունում ոչ երգում տալ և ոչ պատերազմական ծառայութեան մէջ մտնել: Խոյս են տալիս շուայութիւնը: Բոլորը իրարու «դու» են ասում: Ոչ ոքին գլխարկ վեր չեն առնում: Հիւսային-ամբիրկայում ներկայումս նրանց թիւը մինչև 20,000 հոգու է հասնում: Ժան. Յ. Ղ.

Սաստիկ տարափոխիկ հիւանդութիւն էր տարածուել քաղաքում: Ո՛չ հարստութիւնը, ո՛չ երիտասարդութիւնը չը կարողացան ազատել այդ աւերիչ ցաւից: Մանաւանդ աւելի շատ մեռան անտուն, անտէր, ու անապաստան աղքատները: Այս դէպքում ողորմած քոյրերի համար աշխատանք շատ կար: Մի շաբաթ օր, առաւօտեան, Եւանգելիան հիւանդանոց մտնելիս կանգ առաւ պարտիզում, որ մի քանի ծաղիկներ քաղէ, որով գուցէ ուրախացնէր տառապող հիւանդներից մէկին: Երկար ու ձիգ սրահներում հանգարտ ու հով էր: Երբ լուսամուտները բաց էին անում, ներս էին գալիս եկեղեցական մաղթանքների, երգերի ու շաբականի ձայները: Եւանգելիան ոտքերի թաթերի վրայ, հանգարտ կերպով գնում գալիս էր հիւանդների մահճակալների միջով ու իր գործին հետևում: Բայց յանկարծ՝ նա կանգ առաւ, զարմանքից ու երկուդից կայծակնահար եղած: Նա ապշած էր բոլորովին. նրա հրեշտակային երեսի կարմիր գոյնը թռաւ. նա դեղնել էր բոլորովին. հիւանդանոցի պարտեզում քաղած ծաղիկները ձեռքից վայր թափուեցան յատակի վրայ: Նրա առաջ պառկած էր մահճակալի վրայ ծեր ալեգարդ մազերով մի մարդ: Վերջինս սաստիկ տաքութիւն ունէր. այդ ալեւորի ոյժը և ջերմը, կարծէք թէ վերադարձրել էին նրա երեսին իւր երիտասարդութեան կարմիր գոյնը... Այս տառապող ծեր հի-

ւանդը մօտ էր մեռնելու: Նա պառկած էր անշարժ և առանց ուշքի: Նա գտանուում էր քնի և մահուան կէս ճանապարհի վրայ, այսինքն, հոգեվարքի մէջ: Բայց Եւանգելինայի սարսափի ճիւղը ու աղաղակը հասաւ կիսամահ ծերի ականջին. նա իսկոյն ճանաչեց Եւանգելինայի երբեմն ծանօթ ձայնը: Այն ժամանակ կրկին տեսաւ նա քնի մէջ իր անցեալ մանկութիւնը. հայրենի երկրի. այն է՝ Ակադիայի անտառները, բարձր ու անառիկ սարերը, գիւղն ու նրա շրջակայ ոսկեփայլ ցորենի դաշտերը, իսկ այդ բոլորի մէջ՝ սաւառնող չքնաղ Եւանգելինային: Արտասուքը թափուեցան նրա աչքերից: Երբ նա հանդարտ կերպով բարձրացուց իր արտեւանութենքները՝ յանկարծ անսկիւր անհետացաւ... Բայց Եւանգելինան ծնկաջոք ստաւ՝ մնացել էր նրա մահճի մօտ: Նրա անունը կիսատ մնաց մեռնող ալեգարդ ծերունու թարշամած շրթունքների վրայ: Եւանգելինան մնաց անշարժ ինչպէս մի քանի րոպէ տառջ. Գաբրիէլի աչքերից յաւիտեան խաւարեցաւ լոյսը... Իսկ ինքը յաւիտենականութեան յանձնուեց: Սակայն, այսպէս ամեն բանին վերջ եղաւ. համբերութեան, յուսոյ, վշտի և երկիւղի վախճան տրուեցաւ: Եւանգելինան գոհանալով Աստծուց այդ ուշ տեսակցութեան համար՝ տխուր կերպով քաշ էր գցել իւր գլուխը....:

Լուռ ու մունջ կանգնած է նախապատմական անտառը: Նրանից հեռու, հեռու, մի անկիւնում բարձրանում են երկու շիրիմներ: Ամենքին անյայտ Գաբրիէլը ու Եւանգելինան յաւիտեան հանգստանում են բազմամարդ քաղաքի մի կաթոլիկական համեստ գերեզմանատնում: Իսկ կեանքը, անվերջ կերպով ընթանում է: Շարժւում են մարդկանց ձեռքերն ու ոտները. բաբախում են շատ սրտեր, աշխատում ու գործում է մարդու ուղեղը, յառաջադիմում են գիտակցութեան ու ինքնաճանաչութեան զգացմունքները. իսկ նրանք՝ այդ երկու իրար սիրող ու հասարակական կեանքի ինքնազոհ անհատները՝ վաղուց արդէն հանգստացել են ու մարել՝ վերջացնելով իրանց երկար ճանապարհորդութիւնը:

Լուռ ու մունջ կանգնած է նախապատմական անտառը, բայց նրա ստուերախիտ զովութեան մէջ ապրում է այժմ ուրիշ ցեղ, ուրիշ ժողովուրդ, այլ լեզու ու բարբոս: Միայն Ատլանտեան օվկիանոսի տխուր ու մռայլ ափերում ապաստանած են մի քանի տուն ակադիացիներ, որոնց նախնիքները յետ դարձան աքսորից դէպի իրանց հայրենի երկիրը, որ մեռնեն հանգիստ խղճով ու հոգով նրա փլատակուած բեկորների մէջ: Նոցա տներում երեկոյեանները դեռ ևս պատմում են իր հայրենիքին անձնազոհ և կենդանութիւն տուող Եւանգելինայի մասին: Եւ այդ պատ-

մութեանը տխուր արձագանք են տալիս անտառն ու ովկիանոսի աղմկալի ալիքները, որոնք յուսահատ խորտակւում են ժայռոտ ափին:

Յ. Ղ.

ԿՈԼՄԵՐԻ ԴԱՏԱԽՈՐԻ ՏԵՍԻԼԸ

(ԱԼՖՕՆՍ-ԴՕԴԷԻՑ)

ԿՕԼՄԱՐԻ *) ԴԱՏԱԽՈՐԻ ՏԵՍԻԼԸ

Երբ Կօլմարի դատաւորը գերմանացւոց

*) Կօլմար (Colmar) գլխաւոր քաղաք է վերին Ելզասում, վախտա ու Լաուխ գետերի վրայ՝ 27,778 բնակիչներով: Նշանաւոր է վաճառականութեամբ և արուեստներով: Աւելորդ չի լինիլ այս քաղաքի տոհմագրական վիճակը քիչ պարզելու համար՝ մի քանի աշխարհագրական ու պատմական տեղեկութիւններ տալ Ելզասի մասին՝ նաև: Ելզաս, գերմաներէն Elsass, ֆրանսերէն Alases: Սա Ելզասն Գերմանական ընդարձակ նահանգ էր, յետոյ դառաւ ֆրանսիական երկիր: Պարփակում է իր մէջ երկու տեսչութիւններ կամ գեպարտամենտներ Հռենոսի վերին և ստորին հոսանքներում: Իսկ այժմ Լօտարինգլայի հետ միասին կազմում են գերմանական երկու գաւառներ: Վերին Ելզաս-63,648 քառակուսի մղ. տալածութեամբ 412 642 բնակիչներով և ներքին Ելզաս 89,707 քառ. մղ. տարածութեամբ 597,850 բնակիչներով: Շատ արգաւանդ երկիր է: Արհեստները ծաղկած, մարդիկ քաղաքակրթութեամբ լիճակի մէջ են ապրում: Վերջին ժամանակներս, Ելզասը միացնելու համար գերմանական կայսերութեան հետ՝ հակառակ այստեղ ապրող ֆրանսիական ժողովրդի ցանկութեան, իշխան Բիսմարկը առաջարկեց տալ Լօտարինգլային ինքնօրինակար կառավարութիւն: Ֆրանսիական տարրն Ելզասում թէև թւով քիչ, բայց բաւական զօրեղ է բարո-

Վիլհելմ կայսեր հպատակութիւնն ընդունեց, **)

լական ու հայրենասիրական զգացմունքի ոյժով: Նրանք բոլորը խօսում են Ֆրանսերէն: 1871 թուին Ֆրանկֆուրտի դաշնադրութեամբ բոլովին ընկաւ գերմանական իշխանութեան տակ, 79 օ/օ կաթոլիկներ են, 17 օ/օ աւետարանականներ: Այդ երկիրը հարուստ է հանքերով, երկաթով, բրդով, բամբակով, մետաքսով, քիմիական ու ապակեայ գործարաններով ևայլն:

Լուսաւորութիւնը, 11 միջնակարգ դպրոցներ, 18 բնական ուսումնարաններ, 6 ուսուցչական դպրոցներ և 1 համալսարան Ստրասբուրգում: Այս վերջինում կայ բաւական հարուստ գրադարան 310,000 հատոր ընտիր գրքերով: Ահա մի երկիր, ուր մի բուռն ֆրանսիական հայրենասէրներ իրանց բարոյական ու մտաւոր ոյժի վրայ յենուած, այսօր կռուի խնձոր են դառել երկու մեծ քաղաքակիրթ եւրոպական տէրութիւնների մէջ, Գերմանիայի և Ֆրանսիայի: Ֆրանսիայի հայրենասէրները տիպար են այն գաղափարին կամ այն հզօր ոյժին, որին ֆիզիքական ոյժն ու բռնութիւնը չի կարող խորտակել իր հանկերով, որովհետեւ նա վեհ հոգի է և ոչ թէ մի երկիր (территория) ոչխարներով լցուած: Այս երկրում նաև գտնուել են այնպիսի անարգ մարդիկ, որոնք անձնական փառքի հասնելու համար կարագ են դրել գերմանական իշխանութեան հացին՝ ծախելով միանգամայն իրանց հայրենակիցներին անձնական չահերի ու սնուոի փառքի համար, որպիսին է Աօլմարի դատաւորը: Վերջինս հաւկադրել է նրանց իր ապօրինի վարմունքով գաղթել իրանց պապերի երկրից դէպի Ֆրանսիա, ա յսինքն, հայրենասէրներին մօտ:

—**) Ճիշտ այնպէս՝ ինչպէս հայ էֆէնդին տաճկի-հպատակութիւնը ընդունելիս լինի:

Ծան 8. Ղ:

կարծէք՝ այն ժամանակ այլ ևս չկար աշխարհումս նրանից բաղտաւոր մարդ: Այդ մարդը Դելինգէր անունով մի ֆրանսիացի էր: Երբ նա մտնում էր ատեան իր դատաւորական խոյրը ծուռը դրած, հաստ փորը շփելով, սարեկի նման ժպտալով, կարմիր շրթուքներով, կզակը գեղեցիկ բարակ փողպատի վրայ ընկած՝ երեւակայում էր ինքն իրան մեծ ոմն:

«Ա՛խ, ի՞նչ փառաւոր եմ ննջում այժմ, որքան երջանիկ եմ,» ասաց դատաւորը՝ նստելով իր տեղը: Հետաքրքրական էր նայել, թէ ի՞նչպէս նա ձգոււմ էր իր հաստ ոտները, ի՞նչպէս հանգիստ կերպով նստում էր իր մեծ բազկաթոռի փափուկ կաշուի վրայ, որի շնորհիւ նա պահել էր իր բնաւորութեան անփոփոխութիւնն ու երեսի փայլուն գոյնը: Նա արգէն երեսուն տարի էր, որ մատնուած էր դատաւորական նստակեաց կեանքին, ուստի, նրա մէջ կենդանի հոգու և պատուի ոչ մի նշոյլ չըկար:

Խեղճ Դելինգէր, ոչնչացրեց նրան այդ անիծուած բազկաթոռը: Շատ լաւ էր զգում նա իրան այդ փափուկ բարձի վրայ, որը փաթաթուած էր նաև մի առանձին կակուղ նիւթով: Նա այնպէս լաւ էր տեղաւորուել իր տեղում, որ բարեռք համարեց դառնալ Գերմանիայի պրոստիտուտի, միայն թէ՛ չը բաժանուել իր փափուկ, տաք դատաւորական բազկաթոռից:

—Նստեցէք, պարոն Դելինգէր, նստեցէք,

ասաց Վիլհելմ կայսրը: Դեկինգերը նստում է: Այն, նստում է նա մինչ այժմ իր առաջնակայ դատաւորական տեղը Կոլմարում ու Հանգիստ խղճով դատում Բերլինի մեծութեան և պայծառութեան անունով:

Բայց իրօք ոչինչ չը փոխուեցաւ նրա պրոսական դառնալով: Կոլմարի դատաստանի ատեանը մնաց ճիշտ այնպէս, ինչպէս առաջ էր. այն է՝ դանդաղ ու միակերպ: Միւսնոյն անշուք ու տխուր դահլիճն ողորկ նստարաններով, մերկ պատերով, որոնք վաղուց լսել էին փաստաբանների դատարկախօս քրթմնջանքները, նոյն բարձր լուսամուտները, որոնք աղօտ կերպով լուսաւորում էին կտաւեայ վարագոյրների տակից, Քրիստոսի խաչելութեան նոյն պատկերը լեւալն: Կոլմարի դատաստանական ատեանը ընդունելով պրոսական իշխանութիւնը իր վրայ՝ ամենեւին չը կորցրուց իր արժանաւորութիւնը. նրա դահլիճում դրած էր կայսեր կիսարձանն, այնպէս ինչպէս առաջ էր: Այդ բոլորը պիտի ասել՝ որ գեղեցիկ ու իրանց տեղումն էին, միայն . . . Դեկինգերն, այսուամենայնիւ, կարծէք թէ՝ իր տեղումը չէր: Նա ինչպէս էլ որ ձգուէր իր բազկաթուռի վրայ, ինչպէս էլ որ ամուր ու Հանգիստ նստէր իր փափուկ բարձին, բայց դարձեալ նրա առաջնակայ (երիտասարդութեան Հասակում, երբ ճշմարիտ ու անկեղծ ֆրանսիացի էր) քաղցր նիրհելու Հետքն անգամ չը կար: Եթէ յաջողուէր

նստած տեղը քիչ քնելու՝ այն ժամանակ անպատճառ տեսնում էր երազում որ և իցէ արհաւիրք, սարսափ . . . խղճահարութիւն . . . :

Մի անգամ, Դեկինգերը տեսնում է երազում, որ իբր թէ՝ նա մի մեծ բարձր լերան վրայ է. Խօնեկի կամ Ելզասի Բալլօնի *) նման: Խօնչպէս պատահեց, որ նա այնտեղ ընկաւ: Խօնչու նա դատաւորական փառքի ու պաճուճանքի մէջ լինելով՝ էլի յաճախ մի ինչ որ է սարսափ էր զգում իր Հոգում: Նա թնչ կերպով Հասաւ այդ փառքին ու բազկաթուռին (ի Հարկէ Ժապան-Բեաճէ), որի բարձրութիւնից իր ոչնչութիւնը չէր ուզում տեսնել: Նրա բազկաթուռի վրայ ոչինչ չը կար, բայց չէլոտ փայտից, որտեղ լի էին ահագին քանակութեամբ միջատներ: Սակայն, այդ ամենը Դեկինգերը ինքն էլ չը գիտէր և իրան երևակայել անգամ չէր կարող: Նա զգում էր միայն՝ թէ ինչպէս սառն քրտինքի Հետ միասին դողն ու երկիւղը տանջում էին մի ինչ որ ծնշող ճիւղի **) պէս: Երբ Կոլ-

*) Վոգելիան չղթայի երկու լեռների անուններն են:

(** ծնշող-ճիւղ, մի այնպիսի առանձին ծանր վիճակ է, որը մարդ զգում է երազի ժամանակ: Քնած մարդուն երևում թէ՝ նրա վերայ դրած է մի մեծ ծանրութիւն. նա սարսափով աշխատում է աղաղակել, բայց չի կարող: Այդ վիճակը գլխաւորապէս պատահում է այն մարդկանց, որոնք բաւական արիւնոտ են: Արիւնը երբ կանգ է առնում արեան անօթներում, այն ժամանակ յառաջ է գալիս այդ վիճակը: Ընթրիք անելուց յետոյ նոյնպէս պատահում է:

մարի դատաւորը այդպիսի ներքին հոգեկան տանջանքի մէջ էր, ծիրանագոյն կարմիր արեգակը ծագեց Հռենոսի միւս կողմից:

Շվարցվալդի խիտ անտառների յետևից՝ աստիճանաբար արեգակի բարձանալու հետ միասին՝ ցածում, Տաննայի սւ Միւնստէր գետերի հովիտներում, ամբողջ Ելզասի վրայով սկսում են անցնել ինչ որ է անորոշ աղմուկ, շփոթ, բազմաթիւ ոտնների տոփիւններ (ТОПОТЫ), անցնող կառքերի անիւների դղրդիւններ և այլն: Աղմուկն ու շփոթը քանի գնում մօտենում և զօրեղանում էին: Դեռ լինգերի համար տաղտկալի ու սարսափելի վիճակ էր:

Եւ ահա, Կօլմարի դատաւորը իր սնտի բարձրութիւնից տեսնում է թէ՛ ինչպէս այն ճանապարհի վրայ, որն օձապտոյտ բարձրանում է Լեռան ստորոտից, շարժում են իրանց տեղից ու մօտենում նրան սալերի անվերջ, բայց անշուք ու տխուր քարվանները: Այդ Ելզասի բոլոր փրանսիացի բնակիչներն էին, որոնք իրանց հայրենիքից լացով ու կոծով գաղթում էին յիշեալ Լեռան դառիվայրով: Ահաւասիկ երկար շղթայի նման, իրար Բոլոր ժողովուրդների հասկացողութիւնը կապուած է այդ կաշմարի վերաբերմամբ մի ինչ որ է հրէշի հետ, որն իբր թէ՛ ընկնում է քնած մարդու կուրծքին: Աղէքսանդրապոլում կարծումն էր թէ տանտէրը կամ դուրս կը ճնշէ, եթէ խուսկ չը ծխեն շարաթ երեկոյեանները:

Ման. Յ. Ղ.

ետևից շարուած սալերը, չորս եզներ լծած ամէն մէկին: Բոլոր սալերը ցանցաձև կողքեր ունէին, որոնք լինում են հունձի ժամանակ, ծանրաբեռնուած ցորեանի ոսկեայ խուրձերով: Բայց աւաղ, այժմ նրանք ծանրաբեռնուած էին այս դէպքում, ո՛չ թէ հայրենի դաշտերի ցորենով ու պաշարով, ալ տան՝ կահ-կարասիքներով ու գոյքերով, նրանց գութաններով, խոփով ու փոցխով: Նրանց վրայ դարսած էին լայն մահճակալներ, բարձր պահուրաններ, փոքրիկ հնձաններ, երեսայական աթոռներ ու պապերի բազկաթոռներ, որոնց հետ կապուած էին նրանց հնութեան թանկագին յիշողութիւնները, դուրս մղած իրանց խաղաղ հայրենի անկիւններից, զրկուած իրանց սրտին մօտ ու սիրելի դարևոր սրբազնագործուած օճախից:

Ամբողջ տները գաղթում են այդ բեռնաւորուած սալերի վրայ: Ահա, այդ պատճառաւ նրանք այդպէս դանդաղ էին շարժւում ու ճռճուում աղիողորմ կերպով: Եզները դժուարութեամբ էին քաշում սալերը, կարծէք, հայրենի հողն ու երկիրը նրանց անիւներին կպչելիս լինէին:

Չորացած հողի կոշտերը, որոնք արգելք էին լինում տափերում գութանին, տափանին, փոցխերին՝ այս դէպքում առաւել ևս ծանրացնում և արգելք էին լինում նրանց գնացքին: Դիւենգերի գաղթող հայրենակիցները չէին կարող բաժանուել երեսի վրայ ձգած հայրենի դաշտերից, հանգերից

ու մարգերից: Սալլերի գնացքի ետևից խռնուում էր լուռ ու մունջ տխուր ժողովուրդը: Վերջինս բաղկացած էր զանազան հասակի և դասակարգի պատկանող մարդկանցից սկսած բարձրահասակ ծերերից՝ եռանկիւնաձև թասակը գլխներին, որոնք հազիւ հազ կարող էին դանդաջել՝ յենուելով իրանց գաւաղանների վրայ՝ մինչև շկահէր մանուկները, որոնք զնում էին ոտաբոբիկ՝ կապոյտ կտակից կարած վարտիկները հագնելին: Անդամալոյժ պառաւանները, որոնց տանում էին իրանց ուսերի վրայ մատաղահաս թոռները, ծծկեր և անմեղ մանուկները, որոնք տաքանում էին իրանց մայրերի գրկերում . . , գլխակոր գնում էին սալլերի ետևից: Դանդաղ կերպով հետևում էին սալլերին թէ առողջները և թէ թուլերը, թէ նրանք, որոնք հետեւալ տարին պիտի զինուոր գնային և թէ նրանք, որոնք սարսափելի պատերազմի դաշտում մեռնելուց ազատուած էին: Խեղանդամ զրահակիրները իրանց նեցուկների վրայ կաղալով, դժգոյն, յոգնած, զնդաձիգները իրանց պատուտուած համազգեստներով, որոնց ցընցոտիների մէջ բոյն էին դրել Շպանտաուի բերդի կամ գետնափոր տների մէջ նեխած միջատներն ու որդերը: — Սրանք բոլորը վեհանձն կերպով անցնում էին այն ճանապարհով, որի մի ավոււմ նստած էր Կօլմարի դատաւորը: Ահա, այս դէպքում իւրաքանչիւրը նրանցից մօտենալիս արհամարանքով երեսը լետ էր դարձնում: Դելինգերը

նրբան ցանկանում էր թագչիլ ամօթից, գոնէ, վախչիլ մի կերպով . . : Այո, թագչիլ . . . բաց անկարելի էր, որովհետեւ նրա դատաւորական բազկաթուռը կպել էր իր սնոտի բարձր լեռանը. իսկ ինքը բազկաթուռին: Ուստի, այս դէպքում դատաւորը հասկացել էր, որ իր բազկաթուռն ոչինչ է, եթէ ոչ նոյն իսկ իրան խայտառակող ու ծանակող սիւնը: Իսկ պրուսականութիւնը նրան դրեց մի այդպիսի բարձր սիւնի վրայ նրա համար՝ որ նորա ամօթալի ու խայտառակ գործերը հայրենիքի ու ազգի վերաբերմամբ տեսնուեն՝ որքան կարելի է՝ աւելի բարձրից և հեռուից. . . .

Դաղթող քարվանսը շարունակում է իր ճանապարհը: Դելինգերի հայրենիքի սալլերը շարուած իրար ետևից՝ շարժւում էին իրանց տեղերից: Հետզհետէ գաղթում են գիւղերը: Նրանք, որոնք ձգւում էին Զվեցարիայի սահմանով, քշում էին իրանց հետ ահագին քանակութեամբ ոչխարների հօտեր: Նրանցից յետոյ շարժուել էին իրանց տեղերից քաղաքներ, գիւղեր, թղթի, մետաքսեայ և կաշուի գործարանների բոլոր աշխատաւորները. հայրենասէր պատուաւոր քաղաքացիների խումբը, ազգութեան առաքեալ քահանաները, ռաբբիները (հրէից վարդապետներ), ատեանների անդամները և այլն: Շողշողում էին, սև, կարմիր, կանաչ և ուրիշ տեսակ տեսակ հագուստներ:

Սակայն, ահա և Կօլմարի դատաստանական

ատեանը իր հին նախագահի առաջնորդութեամբ . . .

Բայց Դեկտեմբերը, որ քիչ էր մնացել իր զաղթող հայրենակիցիների ամօթից մեռնէր, այդ ժամանակ կամենում էր ծածկել մի բանով իր սեւերեսը: Ափսոս, նրա ձեռքերն անդամալուծ էին դառել, նոքա քաշուել, կարկամել էին: Նա կամենում էր փակել աչքերը, բայց արտեւանուքները չէին շարժւում, չէին հնազանդում նրա ոյժին: Նա հարկադրուած էր նստել այստեղ՝ այդ բարձր ամօթալի սիւնի վրայ՝ բոլորի աչքի առաջին և առնել իր վրայ բոլոր հայրենակիցների արհամարական հայեացքները: Նայում էին նրա վրայ խոժոռ կերպով նաև նրանք, որոնք ծառայութեան մէջ ընկեր էին եղել նրան մինչև պրուսականութիւն ընդունելը: Սակայն անշուշտ դրա նման դատաւորի դրութիւնը սարսափելի է այդպիսի մի խայտառակ ու ծաղրելի վիճակի մէջ: Բայց աւելի ևս սարսափելի է այն ժամանակ, երբ այստեղ նա տեսնում է ամբոխի մէջ իր բարեկամներին, մերձակորներին ու ազգակիցներին, որոնք այնպէս էին ցոյց տալիս իբր թէ՛ չեն ճանաչում իրանց հայրենակցին: Ահա, նաև Դեկտեմբերի գերդաստանը, նրա կիներ, երեխաներն ու զաւակները անցնում են տխուր և գլխակոր նրա մօտով իրանց հայրենակից ֆրանսիացիների հետ միասին, բայց չեն կամենում այդպիսի դաւաճանի երեսին մտիկ տալ: Գլուխները

քաշ գցած գետնին, նրանք շտապում էին ազատուել նրա դաժան ու ամօթահար դէմքից: Երևում էր, նրանց համար ևս տաղտկալի էր Դեկտեմբերի խայտառակ վիճակը . . . մինչև անգամ նրա հարազատ որդին՝ փոքրիկ Միքայէլը, որը մի անմեղ ֆրանսիացի էր, ու իր հօր ամենասիրելի և քնքոյշ թանկագին էակը՝ նա ևս անցաւ հօր մօտից արհամարական հայեացք ձգելով նրա վրայ և ասաց.

— «Դու հայր, քո անձնականնեղ՝ սնոտի փառքի համար, դաւաճանեցիր մեր հայրենիքի ընդհանուր փառքը և մեծութիւնը: Պատճառ եղաք մեզ տարագիր լինելու մեր հարազատ պապերի երկրից՝ ընդունելով պրուսականութիւն: Դու կանգնած քո այդ ամօթալի բարձր սիւնի վրայ՝ ստիպեցիր մեզ գաղթել մեր հայրենիքից, որոնց փլատակների մէջ այսուհետև գիշատիչ բուերը բուռն պիտի դնեն իրանց խռպոտ ձայներով: Բայց կը գայ մի օր, երբ արդար արեգակը պիտի ծագէ անշուշտ հօրիզօնից և մենք կրկին կը վերականգնենք մեր սրտին աւելի մօտ՝ դարերի ընթացքում փայփայած հայրենիքի բեկորները»: Այնուհետև կրկին խորին լուութիւն էր տիրում: Քիչ ժամանակից յետոյ Կոմարի դատաստանական տետանի հին նախագահը, որ ծանօթ էր Դեկտեմբերին, մի քանի վայրկեան կանգ առաւ և ասաց.

— Գնանք մեզ հետ, պ. Դեկտեմբեր, մեր հայրենի երկիրը՝ դէպի Ֆրանսիա: Միք մնայ այստեղ, իմ

բարեկամ . . . Բայց ցաւալին այն էր, որ Դե-
լինգէրը ոտքի չէր կարող կանգնել: Նա մտքի մէջ
կարծէք՝ վազում էր այս ու այն կողմը, կանչում էր
սարսափահար կերպով: Գնացքը դարձեալ անցնում է
նրա մօտով, նա քանի գնում հեռանալով՝ անհետանում
է նրա աչքից: Արեգակը մայր մտաւ: Տիրեց գիշերային
խաւարը: Թագաւորեց մեռելային լուսթիւնը: Այլ
ևս չէին տեսնում հրաշալի սիզաւետ հովիտներն,
որոնց միջից խօզօջալով՝ գնում էին կարկաչահոս գե-
տակները: Խաւարի մէջ էին սպիտակագոյն զանգա-
կատունները, գործարանների մրոտած խողովակները
և այլն և այլն: Այսպէս բոլոր Ելգասի ժողովուրդը
գաղթեց իր հայրենի երկրից, միմիայն մնաց Կօլ-
մարի դատաւոր Դելինգէրը: Այո՛, կարծէք թէ՛ նա
մեխում էր իր ամօթալի ու խայտառակ սիւ-
նին, նստած իր անարգ ու փթած՝ ճիճուններով
լի բազկաթուռի վրայ:

. . . Յանկարծ տեսարանը փոխուեցաւ:
Մայր ծառերի շարքեր, մռայլ ու դժգոյն խաչեր,
շիրիմներ, սեւաւորուած մարդկանց խումբեր...
. . . և այլն: Այդ ոչ այլ ինչ էր, եթէ
ոչ Կօլմարի գերեզմանատունը, որտեղ կատար-
ւում էր մի ինչ որ մարդու հանդիսաւոր թաղումը:
Քաղաքի բոլոր զանգակները տխուր և օրհասական
կերպով հնչում էին . . . գուժելով Կօլ-
մարի դատաւորի մահը, որ իր կեանքի վերջին
տարիներում դառաւ պառակտեալ: Թաղում էին

ատենի անդամ, ֆրանսիացի ծնուած, բայց պրուսակ
դառած Դելինգէրին: Սակայն, մահն արաւ այն, ինչոր
չը կարողացաւ անել պատուի գաղափարը: Նա ա-
զատեց, վերջապէս, անփոխարինելի քարացած դա-
տաւորին իր ցեցոտ բազկաթուռից ու դրեց
չոր դագաղի մէջ այն մարդուն, որը յանդգնաբար
շարունակում էր նստել իր ցեցոտուած՝ միջատներով
լի բազկաթուռի վրայ, որին նստելու նա ամենեւին
արժանի չէր:

Ոչինչ բան չը կայ աշխարհիս երեսին այնքան
սարսափելի, ինչքան որ մարդ իրան տեսնում է
երազի մէջ մեռած. լաց է լինում՝ իր մահուան վրայ:
Դելինգէրը սրտակոտոր ներկայ է լինում իբր իր
թաղման հանդիսին: Բայց մահից աւելի, նրան
վհատեցնում, նեղացնում ու սարսափեցնում է
այն հանգամանքը, որ այդ բազմաթիւ ամբօթի
մէջ, որը սեղմուած խռնում էր նրա սև գագաղի
շուրջը՝ չը կայ ո՛չ մի բարեկամ, ո՛չ մի ազգական,
ո՛չ հայրենակից, ո՛չ մի սրտակից ընկեր, ո՛չ կին,
ո՛չ եղբայր, ո՛չ զաւակ և ո՛չ մի Կօլմարցի. այլ մի
միայն պրուսակները: Սրանց զինուորներն էին
կազմում նրա յուղարկաւորութեան հանդէսը: Նրա
դագաղի առաջից ու յետքից գնում էին պրուսա-
կան դատարանի զգեստաւորուած անդամները: Այն
դամբանական ճառերն, որոնք կարդում էին նրա
գերեզմանի վրայ, պրուսական լեզուով էր, և ո՛չ
իր մայրենի ճկուն լեզուով: Այն հողը, որով

նրան ծածկում էին գետնի տակ և որը նրան
այնպէս ցուրտ էր թւում, աւանդ, իր հայրենի
հողը չէր, այլ պրոսական:

Յանկարծ ահադին ամբոխը յետ է քաշում
դադաղի մօտից: Շիրիմին մօտենում է մի գրա-
հակիր զինուոր և իր կրկնոցի (manteau) տակ
կրելով մի մեծ դափնիայ պսակ անմահներից
(изъ иммортелей) բերած, իբրև մի յաւերժական
իշխատակ:

Ամբոխը յանկարծ դղրդում է: Բոլորը լու-
ղուած վիճակի մէջ են: Կայծակի արագութեամբ
լսւում է ժողովրդի մէջ աղմուկի ու շշուկի
ձայներ

— Բիսմարկը ինքը, Բիսմարկը
. եկաւ: Իսկ Կոլմարի դատաւոր Դելին-
գիրը այդ ժամանակ պառկած էր սև դադաղի մէջ
կարկամած, քաշուած ու չորացած մտածում է:

— «Ձերդ մեծութիւն թէև դուք
ինձ շատ պատիւ էք տալիս , բայց եթէ
այստեղ լինէր ձեր փոխանակ իմ հարազատ որդին,
փոքրիկ ու մատաղահաս Միքայէլը ,
աղջիկներս, կինս , , որոնք բացակայ են
այսօր իմ թաղման տխուր հանդիսից ու անարժան
դադաղից իրանց հայրենակիցների հետ միասին»:

— Յանկարծ բարձրաձայն ծիծաղը ընդհատում է
նրա տխուր մտածողութիւնը: Անմիտ, անպատ-
շաճ քռքռալը կարծէք՝ մի ինչ որ անըմբռնելի

ու վայրենի երևոյթ էր:

— Այս քնչ բան է. քնչ պատահեց, արդեօք,
ինքն իրան սարսափած հարցնում էր Դելինգէրը:

Նա վեր է կենում, կարծէք՝ դադաղից, նայում է
շուրջը

Այդ ժամանակ իշխան Բիսմարկը մեծարանքով,
փառքով ու պատուով դնում է նրա դադաղի
վրայ բազկաթուռի կաշեայ բոլորակը, այն փափուկ
դատաւորական բոլորակը, որի վրայ գրուած էր
հետևեալ արձանագիրը.

« Դելինգէր դատաւորին,

Նստակեաց դատաւորութեան՝

Ի նշան խորին ցաւակցութեան: »

Գերեզմանատնում բոլորը նրա դադաղի շուրջը
կանգնած ծիծաղում էին: Չափազանց ծիծաղից
փորերը ցաւեց: Այդ ամբարտաւան պրոսական
բարձր քռքռոցից դողդողում էին Դելինգէրի շիրիմի
քարերն ու պատերը, որի մէջ նա դառն կերպով
հեծկտում, հեծեծում ու տանջւում էր՝ անարգուած,
արհամարուած ամօթից և յաւիտենական դառն
ծիծաղից

Յար. Ղարաբեօղեան



Его Величества Ефод и
Его Императору Норме - Менеру
Твои Норме

Александр
Душман Норме
гггг. Опубличено
Мечте Пенанте
Самраба

Промет

Промет Норме

5


2000

ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

- 1) Սև-Նեոնցիք. (տոհմագրական պատկեր)
(սպ.) 10 Կ.
- 2) Կնոջ կոչումը և դրուժիչներ Հասարակութեան մէջ. (սակաւաթիւ). . 10 Կ.
- 3) Եւանգելիստ
և
- 4) Կօլմարի դատաւորի տեսիլը. (միասին). . 20 Կ.

Պատրաստ է տպագրութեան համար.

- 5) Զէյթունցիներ (տոհմագրական պատկեր)
- 6) «Ի՞նչ է ազգութիւնը» Ռընանի և Շարլ-Բիզոյի ,Պատասխանը“ նրա դէմ:



Վաճառուում են Թիֆլիսի Հայ գրավաճառանոցներում



807

2013

